ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ԲՈՒԼԻՆԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ **2023**

ԱՐՏԱՀԵՐԹ ՁԵԿՈՒՅՑ

ԲՈՒԼԻՆԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2023

Սույն արտահերթ զեկույցը պատրաստվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 12

ԳԼՈՒԽ 1. ՈՒԺԵՂ ԻՐԱՎԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏ 14

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 25

ԳԼՈՒԽ 3. ԿԱՐԵԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ 29

ԳԼՈՒԽ 4. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ 37

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ՝ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ 44

ԳԼՈՒԽ 6. ԲՈԼՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ 49

ԳԼՈՒԽ 7. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ 55

ԳԼՈՒԽ 8. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 59

ԳԼՈՒԽ 9. ՓԱՍՏԱԳՐՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 63

Հավելվածներ 67

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻՊ աշխատակազմ	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ՀՄԿ	«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏՄԱԿ	«Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԽՀՄ	Խնամակալության և հոգաբարձության մարմին
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բուլինգի հիմնախնդրի ուսումնասիրությունը պայմանավորված է Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում վերհանված խնդիրների և բուլինգի դեպքերի մասին ՄԻՊ աշխատակազմ՝ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ստացված բողոքների թվի աճով, ինչպես նաև պետության կողմից գործնականում բուլինգի հիմնախնդրի կանխարգելման, բացահայտման և արձագանքման մեխանիզմների ներդրման և կատարելագործման անհրաժեշտությամբ: Այս առումով հարկ է նշել, որ տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներով բազմիցս անդրադարձ է կատարվել երեխայի նկատմամբ բուլինգի դրսևորումներին, այդ թվում՝ երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքին և բռնությանը:

Բուլինգն ագրեսիայի պարբերական դրսևորում է որևէ սոցիալական խմբի կողմից տվյալ խմբի որևէ անդամի կամ անդամների նկատմամբ: Բուլինգ են համարվում բանավոր սպառնալիքները, ծաղրը, ֆիզիկական հարձակումները՝ հրելը, ծեծելը, անձի մեկուսացումը, շրջապատից բացառումը և այլն[1]: Բուլինգը երեխայի իրավունքների խախտում է՝ անկախ դրա տեսակից և իրականացման վայրից:

Բուլինգը, որպես կանոն, բնութագրվում է անցանկալի, բացասական, հիմնականում կրկնվող գործողությամբ, խոսքով կամ վերաբերմունքով դրսևորվող վարքագիծ, որը կարող է առերևույթ կամ թաքնված կերպով ագրեսիվ լինել: Արդյունքում, նման վարքագիծը հանգեցնում է բուլինգի ենթարկողի և բուլինգի ենթարկվողի իրական կամ թվացյալ անհավասարության, ինչի հետևանքով բուլինգի ենթարկվողի մոտ կարող է առաջանալ ճնշվածություն, ցածր ինքնագնահատական, անինքնավստահություն կամ արժանապատվության ոտնահարում: Բուլինգը հաճախ դրսևորվում է հասակակիցների և/կամ մեծահասակների կողմից տարբեր իրավիճակներում այնպիսի միջավայրում, որտեղ բացակայում է

[1] Հասանելի է https://ombuds.am/images/files/8cbe89fe58d54b6ba1ff2f6ac5255737.pdf հղումով:

բուլինգի ենթարկվողի, նրա առանձնահատկությունների, կարիքների, զգացմունքների նկատմամբ հոգատարությունը:

Հատկանշական է, որ բուլինգի ոչ բոլոր մասնակիցներն են դիտավորյալ գործում: Բացառված չէ, որ անձը բուլինգի մասնակից դառնա խմբային վարքագծի, հանրային կարծիքի կամ թելադրանքի արդյունքում՝ առանց թիրախավորված անձին վնասելու ցանկության: Լինում են նաև դեպքեր, երբ անձը չի գիտակցում, որ ինքն ուղղակի կամ անուղղակի կերպով բուլինգի մասնակից է:

Բուլինգն ըստ ձևերի բաժանվում է երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլինգի դեպքում վարքային ձևերը դրսևորվում են հարվածելու, ծեծելու, գողանալու, ծաղրելու, վիրավորելու և սպառնալու տեսքով, անուղղակի բուլինգի դեպքում՝ բուլինգի զոհին կանխամտածված մեկուսացմամբ և միջավայրից բացառելով:

Կարող է դրսևորվել հետևյալ եղանակներով՝

- ֆիզիկական բուլինգ՝ հրմշտոցի, հարվածների, ծեծի միջոցով,
- վերբալ կամ խոսքային բուլինգ՝ պիտակավորման և ծաղրի միջոցով,
- սոցիալական կամ հոգեբանական բուլինգ, որի դեպքում փորձում են մեկուսացնել երեխային իր շրջապատից և կանխամտածված կերպով բացառել նրան հասարակությունից,
- կիբերբուլինգ, որն իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով՝ օգտագործելով դրանք որպես վնասելու գործիք:

Բուլինգի հիմնական առանձնահատկություններն են՝

- կողմերի ուժերի անհավասարությունը,
- բռնության պարբերական բնույթը,
- բուլինգի ենթարկվողի վրա թողած հոգեբանական բացասական ազդեցությունը:

Ընդհանուր առմամբ, բուլինգի են ենթարկում կամ ենթարկվում հիմնականում այն երեխաները, ովքեր՝

- չունեն ծնողներ կամ միակողմանի ծնողազուրկ են,

- ժամանակավորապես կամ մշտապես զրկված են ընտանեկան միջավայրից,
- ընտանիքում ենթարկվում են ֆիզիկական կամ հոգեկան բռնության, շրջապատված չեն հոգատարությամբ ու ուշադրությամբ,
- ենթարկվում են տնտեսական շահագործման,
- ունեն ցածր ինքնագնահատական,
- ունեն ակտիվ, երբեմն նույնիսկ ագրեսիվ կամ պասիվ վարքագիծ,
- որևէ կերպ՝ արտաքինով, հասակով, ֆիզիոլոգիական առանձնահատկություններով առանձնանում են ընդհանուրից,
- տեղափոխված են այլ բնակության վայրից (օրինակ՝ մարզից մարզ, գյուղից քաղաք և այլն),
- ֆիզիկապես կամ հուզական տեսանկյունից ավելի թույլ են,
- ինքնավստահ ու համարձակ չեն,
- կախվածություն ունեն ուրիշների կարծիքից[2]:

Ուսումնասիրությունները վկայում են, որ բուլինգն էապես մեծացնում է երեխայի կրթական գործընթացներից դուրս մնալու և դպրոցից բացակայելու հավանականությունը: Բուլինգի ենթարկվող երեխաների մոտ ավելի հաճախ են լինում ինքնամեկուսացման, անքնության, անհանգստության, խուճապի դեպքեր, արատավոր վարքի դրսևորումներ կամ մահվան, ինքնասպանության մասին մտքեր:

Ուսումնասիրությունները վկայում են նաև, որ բուլինգը կարող է երեխայի վատ առաջադիմության արդյունքների կամ պարտադիր կրթություն ստանալուց հետո ուսումը չշարունակելու պատճառներից լինել: Այն էական ազդեցություն կարող է ունենալ նաև երեխաների հոգեկան առողջության, կյանքի որակի, երեխայի վարքի վրա: Հետևաբար, երեխայի ինքնամեկուսացումը, կարգապահությունը, ցածր առաջադիմությունը, դպրոցից հաճախակի բացակայությունը հնարավոր ազդակներ են մանկավարժների, ծնողների և այլ իրավասու մարմինների համար, որ երեխան դպրոցում կամ դպրոցից դուրս որևէ տեսակի բռնության է ենթարկվում: Ուստի, պետք չէ երեխային պարսավել, հանդիմանել կամ

[2] Հասանելի է https://ombuds.am/images/files/8cbe89fe58d54b6ba1ff2f6ac5255737.pdf հղումով:

սաստել, փոխարենն անհրաժեշտ է էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել երեխային, դիտարկել նրա վարքը, փորձել գտնել պատճառները և ինքնարտահայտվելու համար անվտանգ ու արդյունավետ միջավայր ապահովել:

Բուլինգը բացասաբար է անդրադառնում ոչ միայն դրան ենթարկված երեխաների, այլև՝ այն իրականացնողների և, պարզապես, դիտորդների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ երեխայի իրավունքների իրացման լիարժեք երաշխավորման տեսանկյունից հատկապես կարևոր է պետության դերակատարումը բուլինգի կանխարգելման, բացահայտման և արձագանքման գործուն մեխանիզմների ներդրման և ապահովման հարցում:

Թեև սույն զեկույցի հրապարկման օրվա դրությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «բուլինգ» հասկացությունը, սակայն Հայաստանի Հանրապետությունը դեռևս 1993 թվականին վավերացրել է 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ նաև Կոնվենցիա)՝ պարտավորություն ստանձնելով համապատասխանեցնելու իր ներպետական օրենքները և պրակտիկան Կոնվենցիայի պահանջներին:

Կոնվենցիայի վավերացումից հետո մշակվել են բազում ռազմավարություններ, ծրագրեր, ստեղծվել են երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված գործիքակազմեր, մինչդեռ բուլինգի կանխարգելման, բացահայտման և արձագանքման ուղղությամբ նպատակային քաղաքականություն ներդրված չէ, անհրաժեշտ գործիքակազմեր մշակված չեն, աջակցվող նյութերը սակավաթիվ են:

Բուլինգի դեմ պայքարը բխում է նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման 4-րդ և 16-րդ նպատակներից[3], այն է՝ ապահովել ներառական և հավասար որակյալ կրթություն, խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները բոլորի համար, ինչպես նաև խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների ձևավորումը:

[3] Հասանելի է https://www.un.org/sustainabledevelopment/sustainable-development-goals/ հղումով:

Կարևոր է ընդգծել, որ բուլինգի դեմ պայքարի և կանխարգելման արդյունավետության տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի կրթական համակարգում «Ամբողջական կրթական մոտեցում» ձևաչափի ներդրումը՝ հիմք ընդունելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտական կոմիտեի կողմից բուլինգի և կիբերբուլինգի դեմ պայքարի և կանխարգելման վերաբերյալ առաջարկությունները[4], որոնք բաղկացած են հետևյալ ինը հիմնական բաղադրիչներից.



Նշված ինը բաղադրիչներից յուրաքանչյուրը կարևոր և անհրաժեշտ է, իսկ դրանց արդյունավետությունը կախված է դրանցից յուրաքանչյուրի միաժամանակյա ապահովումից: Ուստի, անհրաժեշտ է պլանավորել և իրականացնել համակարգված գործողություններ, որոնք կանոնավոր և պարբերական բնույթ են կրում, ինտեգրված են մեկ միասնական գործիքակազմում: Սա նշանակում է, որ երեխաների իրավունքների պաշտպանության կամ իրավունքների իրացման երաշխավորման գործառույթ ունեցող բոլոր մարմինները պետք է մեկ միասնական ռազմավարության և գործողությունների պլանի մաս կազմեն[5]:

[4] Հասանելի է https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000374794?fbclid=IwAR0RY3nCw7hXcNR3dlaZ6wHKmY8TqHJOWdL91DdKCbPe5iYluGEJt8TheMY հղումով:
[5] Հասանելի է https://ombuds.am/images/files/8cbe89fe58d54b6ba1ff2f6ac5255737.pdf հղումով:

Սույն զեկույցը կազմվել է վերոնշյալ ինը բաղադրիչների համատեքստում և դրանց շրջանակում կատարվել է խորքային ուսումնասիրություն, իրականացվել՝ իրավական վերլուծություն, վեր հանվել՝ բուլինգի առկա հիմնախնդիրը՝ ներկայացվելով առաջարկներ՝ ըստ յուրաքանչյուր բաղադրիչի:

Այսպիսով, սույն արտահերթ զեկույցը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում բուլինգի հիմնախնդիրների վերհանմանը և մշակվել է՝ առաջնային նշանակություն տալով երեխաների տեսակետներին: Զեկույցում ընդգրկվել են ինչպես հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների հետ աշխատող մասնագետների, այնպես էլ՝ պետական իրավասու մարմինների դիրքորոշումները: Զեկույցի մշակման համար օգտագործվել են նաև ՄԻՊ աշխատակազմում բուլինիգի վերաբերյալ մշակված աջակցող նյութերը:

Սույն ուսումնասիրության շրջանակում ՄԻՊ աշխատակազմի կողմից հարցումներ են ուղարկվել պետական իրավասու մարմիններին, քննարկումներ իրականացվել՝ Պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդամների հետ: Հաշվի են առնվել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված անհատական բողոքների վերլուծությունները, այնպես էլ Պաշտպանի կոնվենցիոն մանդատի շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատություններ կատարած այցերի արդյունքները:

Արտահերթ զեկույցի մշակման աշխատանքներում ներգրավվել են ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներն ու «Երեխաների և երիտասարդների պաշտպանության բարելավում և մասնակցության խթանում» Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի հետ համատեղ ծրագրի շրջանակում ընդգրկված անկախ փորձագետներ:

Արտահերթ զեկույցի առանցքը հանրակրթական ուսումնական հաստատություններում բուլինգի հիմնախնդիրն է, սակայն այն արդիական է նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Սույն արտահերթ զեկույցն արտացոլում է 2023 թվականի ապրիլ ամսվա դրությամբ ՀՀ հանրակրթական ուսումնական

հաստատություններում առկա բուլինգի հիմնախնդիրներն ու դրա տարածվածությունը՝ ներառելով նաև պետական իրավասու մարմիններից ստացված տեղեկություններն ու պարզաբանումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն արտահերթ զեկույցի մշակման համար կիրառվել է հստակ մեթոդաբանություն և գործիքակազմ: Գործիքակազմի կիրառման նպատակն է պարզելու դպրոցական միջավայրում բուլինգի հիմնական տեսակները, դրա մշտադիտարկման հիմնական ցուցանիշները, ինտենսիվությունը, ինչպես նաև հնարավորություն ընձեռել ՄԻՊ աշխատակազմին և փորձագետներին ուսումնասիրությունների և տեղեկատվության հավաքագրման միջոցով իրավիճակային մշտադիտարկում իրականացնել:

Ընդհանուր առմամբ, սույն զեկույցի շրջանակում բուլինգի մշտադիտարկման համար տեղեկատվական աղբյուրներն ու կիրառված մեթոդաբանությունը հետևյալն է.

- աշակերտների շրջանում ստանդարտացված հարցում՝ իրենց կողմից դրսևորվող ագրեսիայի ինքնագնահատման սանդղակի կիրառմամբ,
- ուսուցիչների հետ հարցազրույցի հարցաթերթիկ,
- դիտարկման քարտ՝ մշակված մշտադիտարկման այցելություն կատարող մասնագետների համար,
- երեխաների հետ ֆոկուս խմբային քննարկումներ,
- այցելությունների հիման վրա կազմված տեղեկանքներ,
- անհատական դեպքերի կամ բողոքների ուսումնասիրություններ:

Ուսումնասիրության շրջանակում հարցմանը մասնակցել են 940 երեխա, 100 ուսուցիչ, 15 դպրոցի տնօրեն, 8 հոգեբան և 5 սոցիալական մանկավարժ: Դիտարկվել են 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված դեպքերը և բողոքները:

Ուսումնասիրության ընտրանքը ՀՀ բոլոր մարզերից և քաղաք Երևանից հիմնականում պատահականության սկզբունքով ընտրված 15 դպրոցներ են, իսկ որոշ դպրոցներ ընտրվել են՝ ըստ ՄԻՊ աշխատակազմի կողմից արձանագրած բուլինգի դեպքերի տվյալների: Ուսումնասիրության շրջանակում դպրոցներ կատարված այցերը եղել են չհայտարարված:

Ուսումնասիրության շրջանակում կիրառված մեթոդաբանության արդյունքում ստացված տեղեկատվությունը վերլուծվել է ընդհանրացված տարբերակով՝ բացառելով դպրոցների նույնականացումը և դեպքերի թիրախավորումը:

Ուսումնասիրության մեթոդաբանության մեջ հաշվի են առնվել բուլինգի դրսևորման եղանակներն ու հիմնական առանձնահատկությունները:

Մեթոդաբանությամբ ստացած տեղեկատվությունը վերլուծվել է վերոնշյալ 9 բաղադրիչների համատեքստում:

ԳԼՈՒԽ 1. ՈՒԺԵՂ ԻՐԱՎԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏ

Ուժեղ իրավական, քաղաքական դաշտ ունենալու բաղադրիչի կարևորությունը պայմանավորված է երկակի մոտեցումների բացառման և բուլինգի դրսևորումների նկատմամբ պետության բացարձակ անհանդուրժողականությունը գործնականում արտահայտելու անհրաժեշտությամբ: Այս նպատակով պետությունը պետք է բուլինգի դեպքերի պատշաճ արձագանքման հարցում հետևողական և աներկբա դիրքորոշում ունենա:

ՀՀ օրենսդրությամբ «բուլինգ» հասկացությունը սահմանված չէ, սակայն բուլինգի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմերը իրենց ամրագրումն են գտել Կոնվենցիայում և ներպետական նորմատիվ իրավական ակտերում:

Այսպես, օրինակ, ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանության իրավունքը սահմանված է Կոնվենցիայի 19-րդ և «Երեխայի իրավունքների մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 9-րդ հոդվածներով: Մասնավորապես.

Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները պաշտպանելու երեխային ծնողների, խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից:

Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Երեխայի իրավունքների և օրինական շահերի

ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում բուլինգի դրսևորումներից երեխայի պաշտպանության իրավունքը, օրինակ, սահմանված է Կոնվենցիայի 28-րդ, «Հանրակրթության մասին» օրենքի 5-րդ, 20-րդ, 27-րդ, Օրենքի 22-րդ հոդվածներով: Մասնավորապես.

Կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն՝ դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով:

«Հանրակրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝ մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, մարդկային արժանապատվության պահպանմանը և վերջինիս ընդունակություններին, կարողություններին ու առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը, ուստի, պետությունը երաշխավորում է հանրակրթության բնագավառում հետևյալ սկզբունքների ապահովումը:

«Հանրակրթության մասին» օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատությունում սովորողն իրավունք ունի՝ պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը:

«Հանրակրթության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մանկավարժական աշխատողը պարտավոր է հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը, նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները:

Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ,

ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Խտրականության հիմքով բուլինգի դրսևորումներից երեխայի պաշտպանության իրավունքը, օրինակ, սահմանված է Կոնվենցիայի 2-րդ և Օրենքի 4-րդ հոդվածներով: Մասնավորապես.

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը խտրականության բոլոր ձևերից կամ պատժից՝ նրա ծնողների կամ օրինական խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած հայացքների կամ համոզմունքի հիմքով:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:

Նշված իրավական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունը օրենսդրական մակարդակում ճանաչում է երեխայի՝ որպես իր տարիքին և զարգացմանը համապատասխան իրավունքներով և պարտականություններով օժտված հասարակության լիարժեք անդամի, պետության հովանավորության ու պաշտպանության ներքո գտնվելու իրավունքը, և հասարակության յուրաքանչյուր անդամի՝ երեխայի պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը: Յուրաքանչյուր երեխայի դեմ ուղղված բռնության, խտրականության և տարբերակված մոտեցման ցանկացած դրսևորում օրենսդրությամբ արգելված է և առաջացնում է պատասխանատվություն:

Այդպիսով, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ թեև ՀՀ օրենսդրությունն ուղղակիորեն չի սահմանում «բուլինգ» եզրույթի հասկացությունը, այնուամենայնիվ, գործող օրենսդրական

կարգավորումներն անդրադառնում են բուլինգի դրսևորումներին և բավարար են այդպիսի դրսևորումներից երեխայի իրավունքները պաշտպանելու և նրա արժանապատվությունը ոտնահարող գործողություններին պատշաճ արձագանքելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է նաև, որ անկախ վերը նշված օրենսդրական կարգավորումների առկայությունից, իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից կարևոր է նաև «բուլինգ» եզրույթի հասկացության օրենսդրական սահմանումը, և այդ համատեքստում ողջունելի է համարում պետության կողմից օրենսդրական փոփոխությունների շրջանակում՝ «բուլինգ» եզրույթի հասկացության օրենսդրական սահմանմանը և բուլինգի կանխարգելման, բացահայտման և արձագանքման նպատակով օրենսդրական հստակ կարգավորումների նախատեսմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

Ընդ որում՝ նշված հարցին, այդ թվում՝ «բուլինգ» եզրույթի հասկացության օրենսդրական սահմանման անհրաժեշտությանը, Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է ինչպես «Երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված համակարգային խնդիրների վերհանում և լուծումների առաջարկում» հետազոտության[6] շրջանակներում, այնպես էլ ««Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքն ընդունելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում:

Պետք է փաստել, սակայն, որ օրենսդրությամբ բուլինգի դրսևորումներից երեխայի պաշտպանության իրավունքի նախատեսումը դեռևս բավարար չէ այդ իրավունքի ապահովումը պատշաճ եղանակով իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն, որ երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը պետության քաղաքականության հիմնական նպատակներից է, իսկ դրա ապահովումը հնարավոր է միայն բուլինգի դրսևորումներից երեխայի պաշտպանության իրավունքի ապահովման միջոցով՝ Մարդու

[6] Հասանելի է https://ombuds.am/images/files/ad651ecbb0930b69dedbb2699b56c839.pdf հղումով:

իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ կարևոր է ռազմավարական փաստաթղթերում բուլինգի կանխարգելման, բացահայտման և արձագանքման ուղղությամբ իրականացվելիք գործողությունների նախատեսումը:

Ընդ որում, նման գործողությունները ռազմավարության մեջ ներառելու անհրաժեշտությանը Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս անդրադարձել է նաև ռազմավարական փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքներում:

Այսպես՝ Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ (այսուհետ՝ նաև թիվ 1978-Լ որոշում) հաստատվել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը:

1978-Լ որոշման հավելված 2-ի 25-րդ կետով նախատեսվում է օրենսդրորեն արգելել երեխայի նկատմամբ մարմնական պատիժները, մինչդեռ անդրադարձ չի կատարվում երեխաների հոգեբանական և ցանկացած այլ ձևով բռնության դրսևորումների կանխարգելման, բացահայտման և արձագանքման ուղղությամբ իրականացվելիք գործողություններին:

Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշման 3-րդ հավելվածով հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրում՝ որպես ակնկալվող արդյունք, նախատեսվում է սահմանել «երեխայի իրավունքների խախտում» հասկացությունը և կատարելագործել երեխայի իրավունքների խախտման դեպքերի հաշվառման և վարման մեխանիզմները, ներդնել և կիրառել երեխաների իրավունքների խախտման հաշվառման և վարման միասնական վիճակագրական համակարգ: Այս առումով կարևոր է ընդգծել, որ նշված ակնկալվող արդյունքին հասնելու նպատակով անհրաժեշտ է ռազմավարության մեջ ուղղակիորեն նախատեսել հոգեբանական և ցանկացած այլ ձևով բռնության դրսևորումների կանխարգելման,

բացահայտման և արձագանքման ուղղությամբ իրականացվելիք գործողությունների շրջանակը:

Բռնության ցանկացած ձևից երեխաների պաշտպանությանն ուղղված որոշակի միջոցառումներ նախատեսված են Կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի «Երեխայի իրավունքների պաշտպանության 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1622-Լ որոշմամբ:

Հարկ է նկատել, սակայն, որ ինչպես Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 29-ի «Երեխայի իրավունքների պաշտպանության 2021 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1606-Լ որոշմամբ, այնպես էլ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Երեխայի իրավունքների պաշտպանության 2023 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1526-Լ որոշմամբ բուլինգի հիմնախնդիրների վերաբերյալ միջոցառումներ նախատեսված չեն:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում բուլինգի հիմնախնդրի վերաբերյալ պետության քաղաքականության մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով ՄԻՊ աշխատակազմի կողմից պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից:

Առաջին հարցադրումը ուղղված է եղել պարզելու, թե բուլինգի դեպքերի արձագանքման ինչ մեխանիզմներ և գործիքակազմեր ունի իրավասու մարմինը հանրակրթական՝ այդ թվում՝ ոչ պետական, ուսումնական հաստատություններում:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի պատասխան հարցադրմանը, հայտնել է, որ «բուլինգ» եզրույթը դեռևս օրենսդրորեն ամրագրված չէ և ԿԳՄՍՆ-ն լիազորող նորմ չունի իրավական ակտ սահմանելու բռնության և բուլինգի վերաբերյալ, հանրակրթական ուսումնական հաստատությունները չունեն բուլինգի բացահայտման և արձագանքման համակարգված մեխանիզմներ, փաստագրում և արձանագրում: Այդուհանդերձ, ԿԳՄՍՆ-ի ենթակայությամբ գործող ՀԿՄ-ն ունի հասանելի հեռախոսակապ, էլեկտրոնային հասցե, կայքէջ և

սոցիալական այլ հարթակներ, որոնց միջոցով ստանում է բռնության դեպքերի վերաբերյալ հաղորդումներ և արձագանքում դրանց:

Անդրադառնալով ԿԳՄՍ նախարարության դիրքորոշմանը բուլինգ եզրույթի օրենսդրորեն ձևակերպում չունենալու պատճառով բուլինգի բացահայտման և արձագանքման համակարգված մեխանիզմներ, փաստագրում և արձանագրում չունենալու հարցին՝ Մարդու իրավունքների պաշտպանն ևս մեկ անգամ ընդգծում է, որ գործող իրավական կարգավորումները բավարար են բուլինգի դրսևորումներից երեխայի իրավունքները պաշտպանելու և նրա արժանապատվությունը ոտնահարող գործողություններին պատշաճ արձագանքելու համար:

Իսկ ինչ վերաբերում է հասանելի հեռախոսակապի, էլեկտրոնային հասցեի, կայքէջի և սոցիալական այլ հարթակների՝ որպես բուլինգի դեպքերի արձագանքման մեխանիզմների և գործիքակազմերի օգտագործմանը՝ հարկ է փաստել, որ ՄԻՊ աշխատակազմը և ծրագրի շրջանակում ընդգրկված փորձագետներն արձանագրել են, որ ուսումնական հաստատություններ կատարված այցերի ընթացքում որևէ երեխա տեղեկացված չի եղել վերը նշված կայքէջի, հասանելի հեռախոսակապի, էլեկտրոնային հասցեի կամ սոցիալական այլ հարթակների միջոցով բռնության դեպքերի վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու հնարավորությունների մասին:

ԿԳՄՍՆ-ի կողմից վկայակոչված կայքէջի «https://hmk.am/» ուսումնասիրությունները և հեռախոսահամարին իրականացված փորձնական զանգերը վկայում են, որ դրանք արդյունքում չեն ծառայում նպատակային նշանակությանը և հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին:

Մասնավորապես՝ կայքէջը հասանելի ձևով երեխաներին չի տրամադրում տեղեկատվություն բողոք ներկայացնելու հնարավորության վերաբերյալ, չի ապահովում բողոքի ներկայացման գաղտնիությունը, չի պարունակում ձայնային ցուցումներ և այլն: Իսկ կայքում նշված հեռախոսահամարին իրականացված փորձնական զանգին ի պատասխան ՀՄԿ-ի աշխատակիցը հայտնել է, որ երեխան առանց ծնողի չի կարող դիմել

և հավելել, որ «...չի պատկերացնում դեպք, որ երեխան առանց ծնողի դիմում ներկայացնի»:

Նշվածը վկայում է այն մասին, որ երեխան բուլինգի ենթարկվելու դեպքում առանց ծնողի և ապանձնավորված տարբերակով չի կարող բողոք ներկայացնել: Մինչդեռ կարող են լինել դեպքեր, երբ երեխան չցանկանա ծնողին այդ մասին պատմել, իսկ պատմելու դեպքում ծնողը խոչընդոտ հանդիսանա բողոք ներկայացնելու համար:

Երևանի քաղաքապետարանը, ի պատասխան հարցադրմանը, հայտնել է, որ բուլինգի դեպքերին արձագանքելու մեխանիզմներից է համագործակցությունը ինչպես հանրապետական, այնպես էլ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հետ՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Պարզաբանումների համաձայն՝ բուլինգի վերաբերյալ հաղորդումներ ընդունելու մեխանիզմ քաղաքապետարանի կողմից չկա ներդրված:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի պատասխան հարցադրմանը, ներկայացրել է պարզաբանումներ մարզային ենթակայության ներքո գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների վերաբերյալ: Ներկայացված պարզաբանումների ուսումնասիրությունը վկայում է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների մեծամասնությունում բուլինգի վերաբերյալ երեխաների կողմից հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ մշակված չէ: Որպես այդպիսի մեխանիզմ որոշ դեպքերում վկայակոչվել է «Թեժ գիծ» հեռախոսակապը, իսկ որոշ ուսումնական հաստատություններում «Google form» համապատասխան հարցաշարը, որոնք սակայն որոշ դեպքերում կրում են ձևական բնույթ, քանի որ ինչպես արձանագրվել է կատարված այցերի և հարցումների արդյունքում, դրանց մասին աշակերտների և ուսուցիչների մեծամասնությունը տեղյակ չի եղել:

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փաստել, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում բացակայում են բուլինգի դեպքերի պատշաճ արձագանքման մեխանիզմներն ու գործիքակազմերը:

Երկրորդ հարցադրումն ուղղված է եղել պարզելու, թե հանրակրթական ուսումնական հաստատություններում բուլինգի պատճառ

հանդիսացող խտրական վերաբերմունքի դեմ ինչ քաղաքականություն է մշակվել և ներդրվել, ինչ աշխատանք է կատարվում բուլինգի պատճառների հայտնաբերման և կանխման ուղղությամբ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ նշված հարցի վերաբերյալ տրված պարզաբանումից բխում է, որ բուլինգի պատճառների հայտնաբերման և կանխման ուղղությամբ իրականացվող գործողությունները, հիմնականում, ՀՄԿ-ի գործունեության շրջանակներում՝ դասընթացների, ինտերակտիվ ներկայացման, իրազեկման միջոցառումների ձևաչափերով պարբերաբար իրականացվող միջոցառումներն են՝ կազմակերպված ինչպես աշակերտների, այնպես էլ մանկավարժների և մասնագետների համար:

Երևանի քաղաքապետարանի՝ նշված հարցի վերաբերյալ տրված պարզաբանումից բխում է, որ բուլինգի պատճառ հանդիսացող խտրական վերաբերմունքի կանխարգելմանը միտված են դասավանդվող մի շարք առարկաների ուսումնական ծրագրով նախատեսված համապատասխան թեմաները, դասղեկի ժամերի և տարբեր կրթադաստիարակչական միջոցառումների շրջանակում արծարծվող նյութերը:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած պարզաբանումների վերլուծության համաձայն՝ մարզային ենթակայության ներքո գործող ուսումնական հաստատություններում հիմնականում բուլինգի պատճառ հանդիսացող խտրական վերաբերմունքի դեմ պայքարի հստակ քաղաքականություն ներդրված չէ: Այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները հիմնականում դասղեկի ժամին անցկացվող զրույցներն ու իրազեկմանն ուղղված որոշ միջոցառումներ են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փաստել, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում բուլինգի պատճառ հանդիսացող խտրական վերաբերմունքի դեմ, ինչպես նաև բուլինգի պատճառների հայտնաբերման և կանխման ուղղությամբ իրականացվող գործողությունները, ըստ ներկայացված տվյալների, սահմանափակվում են դասընթացների, տարբեր իրազեկման միջոցառումների շրջանակներում, որոնց դերին ավելի մանրամասն անդրադարձ կկատարվի ստորև: Պետք է

փաստել, սակայն, որ անկախ նման դասընթացների, միջոցառումների իրականացումից ուսումնասիրության շրջանակում դպրոցների տնօրենների և մանկավարժների հետ զրույցները վկայում են անգամ «բուլինգ» եզրույթի տարընկալման մասին:

Մինչդեռ՝ բացի դասընթացներից և տարբեր իրազեկման միջոցառումներից պետության քաղաքականության ուղղություններում պետք է դիտարկել նաև կարեկից, հոգեբանական և ֆիզիկական անվտանգ կրթական միջավայրի ձևավորմանը, հաշվետու մեխանիզմների, փաստագրման և մշտադիտարկման ինստիտուտների ներդրմանը, միջգերատեսչական ուժեղ համագործակցությանը, բուլինգի բոլոր դերակատարների ներգրավմանը և երեխայի իրավագիտակցության բարձրացմանն ուղղված գործուն և հաշվետու քայլերի մշակումն ու իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝

- ***օրենսդրությամբ սահմանել «բուլինգ» հասկացությունը,***
- ***բուլինգի կանխարգելման, բացահայտման և արձագանքման ուղղությամբ իրականացվելիք գործողությունները նախատեսել ռազմավարական փաստաթղթերում և ոլորտին առնչվող տարեկան, համալիր և այլ ծրագրերում,***
- ***ներդնել գործուն մեխանիզմներ և ծրագրեր իրավակիրառ պրակտիկայում բուլինգն այլ դեպքերից տարբերակելուն, ինչպես նաև հիմնախնդրի առնչությամբ ինչպես երեխաների, այնպես էլ՝ մանկավարժների և բուլինգի բոլոր դերակատարների իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ,***
- ***ներդնել գործուն ծրագրեր՝ ուղղված կարեկից, հոգեբանական և ֆիզիկական անվտանգ կրթական միջավայրի ձևավորմանը,***
- ***ներդնել բուլինգի հիմնախնդրի վերաբերյալ հաշվետու մեխանիզմների, փաստագրման և մշտադիտարկման***

ինստիտուտները, ինչպես նաև ձևավորել միջգերատեսչական ուժեղ համագործակցություն,

- *մշակել հանրակրթական ուսումնական հաստատություններում բուլինգի դեպքերի բացահայտման ու կանխարգելման մեխանիզմներ և ներդնել արագ արձագանքման գործիքակազմեր,*
- *գործարկել բուլինգի պատճառ հանդիսացող խտրական վերաբերմունքի դեմ պայքարի հստակ քաղաքականություն,*
- *քայլեր ձեռնարկել բուլինգի վերաբերյալ երեխաների կողմից գաղտնի և ինքնուրույն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմներ ներդնելու և առկա մեխանիզմները կատարելագործելու ուղղությամբ:*

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ծահագրգիռ կառույցների մասնագետների վերապատրաստումները և կարողությունների զարգացումն առանցքային նշանակություն ունեն բուլինգի դեպքերի կանխարգելման, ինչպես նաև այս գործընթացում երեխաների թիրախավորումից ու բռնությունից զերծ մնալու հարցում:

Բացի այդ, միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մոնիթորինգի ինստիտուտի ներդրումն ուսումնական հաստատություններում, այն է՝ մասնագիտական և խորհրդատվական ուղղորդման հնարավորությունների առկայությունն ինչպես երեխաների, այնպես էլ՝ մանկավարժների շրջանում, նպաստում է արդյունավետ պրակտիկայի զարգացմանը: Նշվածը ենթադրում է, որ մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված միջոցառումների արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն կարիքահեն վերապատրաստումների նախապատրաստական աշխատանքներով, այլև՝ հատկապես ստացած գիտելիքները և հմտությունները գործնականում կիրառելու շարունակական մասնագիտական աջակցության ու խորհրդատվության անհրաժեշտությամբ:

Վերապատրաստումները, անկախ դրանց բովանդակությունից, թեմատիկ ուղղվածությունից, պետք է մասնակիցներին տրամադրեն հստակ «Ով, ինչ, ինչպես, ինչու» գործիքակազմ, այն է՝ հստակ պարզաբանումներ, թե բուլինգի դեմ պայքարում ովքեր են ներգրավված, ինչ իրավասություններ կամ ինչ միջոցներ ունեն վերջիններս, ինչպես պետք է համագործակցեն այլ դերակատարների հետ և ինչ մեխանիզմներ պետք է ներդրվեն կոնկրետ աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև ինչ նպատակ է հետապնդում կոնկրետ գործողությունը կամ ներգործությունը և ինչ ցուցանիշներով պետք է գնահատվի արդյունքը: Հետևաբար, այս գործընթացում կարևոր է դերակատարների միջև կանոնավոր հետադարձ կապը, որն անհրաժեշտ է ինչպես միջամտության/գործողության արդյունավետությունը գնահատելու և անհրաժեշտության դեպքում այն վերանայելու համար, այնպես էլ

գործընթացի վերաբերյալ փաստերի, ակնկալվող և փաստացի արդյունքների մասին անհրաժեշտ տվյալների և տեղեկատվության հավաքագրման և ուսումնասիրության համար:

Սույն բաղադրիչի ուղղությամբ պետության կողմից կատարված աշխատանքների մասին տեղեկություն ստանալու նպատակով՝ համապատասխան գրություններ են ուղարկվել իրավասու մարմիններին այն հարցադրմամբ, թե 2021 թվականից մինչև 2023թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում բուլինգի մասին իրազեկվածության բարձրացման նպատակով ինչ միջոցառումներ, վերապատրաստումներ և դասընթացներ են կազմակերպվել երեխաների և նրանց ուսուցման ու դաստիարակության գործընթացում ներգրավված աշխատակիցների համար և որքան անձ է մասնակցել դրանց:

Նշված հարցադրումներին ի պատասխան՝ ԿԳՄՍՆ-ն տեղեկացրել է, որ բուլինգի վերաբերյալ ՀՄԿ-ն իրականացնում է դասընթացներ, քննարկումներ, իրազեկող միջոցառումներ, տեսանյութեր և այլ աշխատանքներ: Ծնողների, երեխաների, ինչպես նաև մասնագետների համար շարունակաբար իրականացվում են իրազեկման աշխատանքներ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների միջոցով, ինչպես նաև լրատվամիջոցների, ասուլիսների, հանրային քննարկումների և այլ միջոցներով:

Նույն հարցադրմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ ուսուցիչների և դաստիարակների ներգրավմամբ կազմակերպվել են առանձին քննարկումներ՝ կրթական միջավայրում երեխաների նկատմամբ բռնության, այդ թվում բուլինգի դրսևորումների բացառման անհրաժեշտության վերաբերյալ: Երևան քաղաքի ենթակայության բոլոր դպրոցներում կազմակերպվել են երեխաների իրավունքների իրազեկման միջոցառումներ՝ «Իմ իրավունքներն իմ աչքերով» խորագրով, որոնց շրջանակում արծարծվել են նաև բռնությունից զերծ կրթական միջավայրի ապահովմանն առնչվող հարցեր:

Իրավասու մարմինների կողմից տրամադրված տեղեկատվությունը վկայում է, որ առկա չեն բուլինգի հիմնախնդրի լուծման և ուսուցիչների վերապատրաստման կայուն ծրագրեր, որոնք կապահովեն թեմայի

վերաբերյալ մասնագետների շարունակական և միասնական մոտեցմամբ վերապատրաստումները և կարողությունների զարգացումը:

Բացի այդ, ուսումնասիրության շրջանակում իրականացված այցերի ընթացքում փորձագետներն արձանագրել են, որ ՀՀ-ում գործող որոշ դպրոցների ուսուցիչներ երբևէ բուլինգի վերաբերյալ վերապատրաստումների չեն մասնակցել, անգամ եղել են ուսումնական հաստատություններ, որոնց ուսուցիչներն անտեղյակ են եղել բուլինգի և դրա վնասակար հետևանքների մասին: Բացի այդ, դպրոցների տնօրենները փորձագետների հետ զրույցների ընթացքում նշել են, որ բուլինգի վերաբերյալ վերապատրաստումներ քիչ են լինում կամ դրանք լինում են կամավորության սկզբունքով, իսկ ուսուցիչները «կամավոր վերապատրաստման գնալու ցանկություն չունեն»:

Հարկ է արձանագրել նաև, որ այցերի ընթացքում եղել են մասնագետներ, ովքեր նշել են, որ մասնակցել են նմանատիպ դասընթացների և բուլինգի դեպքերի վարման հարցում զարգացրել իրենց մասնագիտական ունակությունները:

Այդպիսով, հաշվի առնելով պետական մարմինների ներկայացրած տեղեկությունները և սույն ծրագրի շրջանակում կատարված ուսումնասիրությունները՝ Մարդու իրավունքների պաշտպանը ընդգծում է, որ դասընթացների և վերապատրաստումների կազմակերպումը ՀՀ-ում պետք է կրի համընդհանուր բնույթ և ուսուցիչներին տրվի հատուկ մասնագիտական աջակցություն բուլինգի դեպքերին պատշաճ արձագանքելու և «մի վնասիր» սկզբունքով առաջնորդվելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝

- ***բուլինգի վերաբերյալ իրազեկման աշխատանքները կազմակերպել համընդհանուր մակարդակով,***
- ***իրականացնել շարունակական վերապատրաստումներ՝ ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ուսումնական հաստատությունների անձնակազմերի համար՝ երեխաների***

իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,

- *մշակել մասնագետների համար ուղեցույցներ, մասնագիտական ձեռնարկներ, աջակցող նյութեր՝ կազմակերպելով դրանց կիրառման վերաբերյալ համապատասխան դասընթացներ,*
- *Հայաստանի Հանրապետությունում գործող համալսարանների մանկավարժական կրթական ծրագրեր իրականացնող ֆակուլտետներում ներդնել բուլինգի վերաբերյալ պարտադիր դասընթացներ:*

ԳԼՈՒԽ 3. ԿԱՐԵԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Կրթական միջավայրի ձևավորման համար նախևառաջ անհրաժեշտ են երեխայակենտրոն մոտեցումներ և ճկուն, աջակցող գործիքակազմեր, որոնք հնարավոր կլինեն գործարկել հատկապես բարդ իրավիճակներում:

Հարկ է նշել, որ Պաշտպանին հասցեագրված բուլինգի դեպքերի մասին բանավոր ահազանգերով բազմիցս բարձրացվել է դպրոցներում երեխայակենտրոն մոտեցումների գրեթե բացակայության և դրանց ներդրման անհրաժեշտության հարցը: Օրինակ, բանավոր բողոք է ստացվել այն մասին, որ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչը երեխային, ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, թույլ չի տալիս մասնակցել դասաժամերին, քանի որ, ըստ նրա, երեխան չի կարողանում կատարել վարժությունները:

Այս համատեքստում պետք է նշել, որ երեխայի նկատմամբ տարբերակված վերաբերմունքն անթույլատրելի է և դպրոցը պետք է ապահովի բոլոր երեխաների համար կարեկից և կարիքներին համապատասխան միջավայր:

Սույն ուսումնասիրության շրջանակում ուսուցիչների հետ իրականացված հարցումները վկայում են, որ ուսուցիչներն ունեն բուլինգի արձագանքման ստերեոտիպային մոտեցումներ, որոնք, ըստ էության, երեխայակենտրոն չեն և չեն ապահովում նաև կարեկից միջավայր: Օրինակ, դպրոցներում երեխաների հետ զրույցները կրում են ֆորմալ խրատական բնույթ, երեխաների միջև կոնֆլիկտների դեպքում հրավիրում են ծնողի՝ բողոքելով երեխայի վարքագծի վերաբերյալ:

Հատկանշական է այն փաստը, որ որոշ ուսուցիչների պնդմամբ կան մանկավարժներ, որոնք աշակերտների հետ հաղորդակցվում են վիրավորանքների միջոցով: Անհրաժեշտ է նշել, որ, ըստ հարցումների, աշակերտները չեն հաղորդակցվում դպրոցի հոգեբանի հետ. հոգեբանը ընկալվում է աշակերտների կողմից որպես «հոգեբույժ», ում դիմելը ամոթալի է:

Դպրոցներում, հիմնականում, բացակայում է տեղեկատվական հարթակ ծնողների համար: Երեխաների կարգապահության հարցերը

ծնողների հետ քննարկվում են՝ ըստ անհրաժեշտության: Երեխաների շրջանում բուլինգի վերաբերյալ իրազեկման միջոցը, հիմնականում, տարվա մեջ 1 կամ 2 անգամ թեմայի վերաբերյալ միջոցառում կազմակերպելն է: Մինչդեռ կարեկից միջավայրի ձևավորումը շարունակական գործընթաց է և պետք է լինի մշտական, չընդհատվող գործողությունների զուգորդմամբ:

Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև ավագ դասարանի աշակերտների շփումը ցածր դասարանի աշակերտների հետ՝ բացառելով ավագ աշակերտների կողմից որևէ ճնշման գործադրումը կրտսեր աշակերտների նկատմամբ և խրախուսելով միմյանց նկատմամբ հոգատար մոտեցումների ցուցաբերումը:

Դիտարկման արդյունքները վկայում են, որ դպրոցների մեծ մասում երեխաների վարքագծի հետ կապված հարցերը քննարկվում են դպրոցի ղեկավար անձնակազմի հետ: Դպրոցներում բացակայում են երեխաների վարքագծի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող մատյաններ:

Մեկ այլ խնդիր է հաշմանդամություն ունեցող աշակերտների հետ պատշաճ աշխատանքների և մոտեցումների ապահովման հարցը: Հաշմանդամություն ունեցող աշակերտների հետ տարվող աշխատանքի բնույթը, հիմնականում, զրույցների անցկացումն է, որոշ դպրոցներում սպորտային և մշակութային միջոցառումներին մասնակցության ապահովումն է:

Ուսումնասիրության ընթացքում դիտարկված 15 դպրոցների գերակշռող մասում դպրոցի միջավայրը եղել լարված է և կոնֆլիկտային:

Երեխաները հայտնել են դպրոցում փոխտնօրենի կողմից աշակերտների նկատմամբ ականջ քաշելու, ապտակելու և այլ ձևերով ֆիզիկական պատիժ կիրառելու դեպքերի մասին: Ուսուցիչները հայտնել են դպրոցներում աշակերտների վարքագծի կարգավորման և երեխաների հետ զրուցելու նպատակով ոստիկան հրավիրելու դեպքերի մասին:

Ուսուցիչների հետ հարցազրույցների վերլուծությունը ցույց է տալիս, որ երեխաների շրջանում բուլինգի տարածված դրսևորումներն են ֆիզիկական հարվածներն ու վիրավորական բառերով միմյանց հետ շփումը: Այսպիսի պայմաններում դպրոցի անձնակազմի արձագանքը դպրոցական բուլինգի դեմ պայքարին՝ ուսուցիչների կողմից գնահատվում է միջին:

Գնահատականը հիմնավորվում է այն հանգամանքով, որ դպրոցում շատ է զգացվում հոգեբանի կարիք, իսկ աշխատակիցները բուլինգի դեմ պայքարում բավարար հմտություններ չունեն, քանի որ ամենօրյա աշխատանք չի իրականացվում անձնակազմի հետևողական վերաբերմունքի ձևավորման և առաջացած խնդրին արագ արձագանքելու գործիքակազմ մշակելու համար:

Աշակերտների շրջանում կիրառված ինքնագնահատման թերթիկների արդյունքների վերլուծությունը վկայում է, որ աշակերտների մեծամասնությունը ցուցաբերում են միմյանց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք: Աշակերտները կիրառում են միմյանց նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնություն: Ֆիզիկական բռնությունը դրսևորվում է հարվածելու, ապտակելու, հրել-հրմշտելու ձևերով, իսկ հոգեբանական բռնությունը՝ մականունների կամ վատ անունների դիմելաձևերով:

Բուլինգը, շատ դեպքերում, աշակերտների կողմից կիրառվում է որպես զվարճանալու միջոց: Աշակերտների մեծ մասը, որպես ինքնապաշտպանության միջոց, ֆիզիկական բռնության դեպքում պատասխան հարված է տալիս ֆիզիկական բռնություն կիրառելով, իսկ հոգեբանական ճնշման արձագանքը, հիմնականում, դրսևորվում է պատասխան վիրավորանքներ հնչեցնելու, ծաղրելու ձևերով: Դասամիջոցներին ագրեսիան ավելի է սրվում, քանի որ աշակերտները դուրս են գալիս դասասենյակներից, և ուսուցիչների վերահսկողությունը թուլանում է:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ բարձր է նաև կիբերբուլինգի ցուցանիշը: Աշակերտները սոցիալական ցանցերի միջոցով սպառնում կամ ծաղրում են այլ օգտատերերի, իրենք էլ՝ դառնում դրա զոհը: Ընդհանուր առմամբ՝ հարցումներին մասնակցած աշակերտների գրեթե 20 տոկոսը նշել են, որ շաբաթական առնվազն 1 անգամ սոցիալական ցանցերի միջոցով սպառնում կամ ծաղրում են ինչ-որ մեկին: Երեխաները հայտնել են նաև համացանցային խաղերի մասին, որտեղ իրենք սպառնալիքների և վիրավորանքների ձևով ճնշման են ենթարկվել ազգությամբ ադրբեջանցի և

թուրք օգտատերերի կողմից, որի պատճառը ազգային պատկանելությունն է եղել՝ հայ լինելը:

Մեկ այլ խնդիր է հանրակրթական ուսումնական հաստատություններում բռնության դրսևորումների առկայությունը և ուսուցիչների վերաբերմունքն այդ դրսևորումներին: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ուսուցիչների մի մասը դպրոցում բռնության դրսևորումները համարում են իբրև սովորական երևույթ, ինչը բացառում է կարեկից կրթական միջավայրի ապահովումը: Ըստ որոշ մանկավարժների՝ երեխաների շրջանում մեկմեկու ծաղրելը բնական երևույթ է: Ուսուցիչների լայն զանգված կարծում է, որ ամեն երեխայի դաստիարակություն տվողն իր ընտանիքն է, իսկ դպրոցը միայն գիտելիք ստանալու համար է, ուստի իրենք երեխաների դաստիարակությամբ զբաղվել չեն կարող:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ «բուլինգ» հասկացության մասին իրազեկվածությունը թե՛ աշակերտների, թե՛ ուսուցիչների շրջանում ցածր է: Ուսումնասիրության մասնակցած որոշ ուսուցիչներ ընդհանրապես տեղյակ չեն նման հասկացության գոյության մասին, մեծամասնությունն ուղղակի լսել է բառը, սակայն բացատրությունը և մեկնաբանությունը չգիտեն: Աշակերտների մեծ մասը բուլինգ հասկացությունը առաջին անգամ էր լսում: Մարզերի և Երևան քաղաքի դպրոցներում այս առումով իրազեկվածության մակարդակը գրեթե նույն է եղել: Դպրոցներից մեկում, օրինակ, ֆոկուս խմբի քննարկման արդյունքում արձանագրվել է, որ աշակերտները երբևէ չէին լսել «բուլինգ» հասկացության մասին, սակայն ծանոթ էին երևույթի առկայությանը և փաստել են, որ այն դպրոցում տարածված է:

Ըստ ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած աշակերտների գերակշռող մեծամասնության՝ որևէ անձի բուլինգի ենթարկելու հիմնական պատճառներից են՝ բոլորից բարձր լինելու, ինքնահաստատվելու միտումը, անհավասար պայմանները: Ըստ երեխաների՝ առավել խոցելի խմբերից են ցածր առաջադիմություն ունեցող՝ «վատ սովորող», «վատ» հագուստ կրող, առանձնահատուկ արտաքին տեսք և հաշմանդամություն ունեցող երեխաները:

Երեխաների շրջանում տարածված մոտեցում կա այն մասին, որ բուլինգի ենթարկվողը ինքն է մեղավոր իր կարգավիճակի համար, քանի որ չի կարողանում պաշտպանել իր իրավունքները: Կան աշակերտների առանձնացված խմբեր, որոնք հոգեբանական, ֆիզիկական ճնշում են գործադրում ավելի «թույլ» աշակերտների նկատմամբ:

Հատկանշական է, որ ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում երեխաները նշել են, որ դպրոցում գրանցվում են ֆիզիկական, հոգեբանական բռնության դեպքեր ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների կողմից:

Դպրոցների մեծամասնությունում ուսուցիչների կողմից նկատվում է խտրական վերաբերմունք աշակերտների նկատմամբ, որը դրսևորվում է ցածր գնահատական նշանակելու ձևով: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ուսուցչի նկատմամբ վստահությունը դպրոցներում ցածր է, երեխաների մոտ առկա է զգուշավորություն՝ քննադատությունից և պիտակավորումից զերծ մնալու նպատակով: Երեխաների հետ զրույցները վկայում են, որ վերջիններս հաճախ են թաքցնում դպրոցում տեղի ունեցող միջադեպերը ուսուցիչներից, որովհետև ուսուցիչների արձագանքը նման դեպքերում բացասական հետևանք է ունենում աշակերտների համար: Օրինակ՝ ուսուցիչը կարող է տարբերակված մոտեցում ունենալ իրենց հանդեպ, իսկ երեխաների շրջանում աշակերտները կարող են պիտակավորվել, որպես մատնող՝ «խաբար տանող-բերող» և դրա պատճառով բուլինգի ենթարկվել:

Դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դեպքում տարբերակված և ոչ կարեկից միջավայրի առկայությունը ակնհայտ է: Գրանցվել են դեպքեր, երբ, օրինակ, ծնողները համախմբվել և բողոքել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային դասարանից հեռացնելու համար, կամ, երբ դասարանի աշակերտների ծնողները պնդել են, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի վարքագիծը բացասական ազդեցություն ունի իրենց երեխաների վրա և առաջարկել են իրենց ֆինանսավորմամբ ուղեկցող մասնագետ՝ «տյուտոր»:

Ուսումնասիրության շրջանակում ուսուցիչները նշել են, որ իրենց համար առավել դժվար են կարգավորվում այն վիճակները, երբ երեխայի ծնողները չեն ցանկանում և խուսափում են համագործակցել դպրոցի անձնակազմի հետ կամ արդարացնում են իրենց երեխային՝ առանց բուլինգի պատճառները բացահայտել ցանկանալու:

Նշվածը վկայում է այն մասին, որ դպրոցներում համապատասխան աշխատանքներ է պետք տանել նաև ծնողների հետ: Հատկանշական է, որ ուսումնասիրության շրջանակում դիտարկված որևէ դպրոցում ներդրված չի եղել ծնողի հետ աշխատանքի որևէ մեխանիզմ:

Որոշ դեպքերում կրթական կարեկից միջավայրի բացակայությունը հանգեցրել է նաև երեխայի դպրոցի փոփոխության: Արձանագրվել է դեպք, երբ երեխայի նույնասեռական լինելու մասին հայտնի է դարձել իր դասարանի և դպրոցի երեխաներին, ապա տվյալ երեխային այդ դպրոցից այլ դպրոց տեղափոխելը ուսուցիչները դիտարկել են խնդրի լուծման նախընտրելի տարբերեակ: Օրինակ, դպրոցներից մեկում, սովորել են նույն ընտանիքից երեկու երեխա, և երեխաներից մեկն ունեցել է նույնասեռական կողմնորոշում: Դրա հետևանքով դասարանի մյուս աշակերտները վերջինիս բացասական են վերաբերվել, չեն ցանկացել շփվել, ծաղրել են և այլն, անուղղակիորեն ընտանիքի մյուս երեխան նույնպես ենթարկվել է բուլինգի: Արդյունքում, ծնողը ցանկացել է երկու երեխային էլ այլ դպրոց տեղափոխել, սակայն հարցմանը մասնակցած ուսուցիչներից մեկը, որպես հաջողված պատմություն հայտնել է փորձագետներին, որ իրենք հորդորել են ծնողին միայն նույնասեռական կողմնորոշում ունեցող երեխային տեղափոխել, ինչին ծնողը հետևել է:

Հարկ է արձանագրել, որ ուսումնասիրության ընթացքում հարցումների մասնակցած և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների կողմից նշվել է նաև սեռական կողմնորոշմամբ պայմանավորված բուլինգի դեպքերի մասին, ընդ որում՝ վերջիներիս կողմից նորմալ են համարվել նման դեպքում բացասական և խտրական մոտցումները, բուլինգի դրսորումները:

Սույն զեկույցում համակողմանի վերլուծություն կատարելու նպատակով՝ կարեկից կրթական միջավայրի ձևավորմանն ուղղված պետության քայլերի, ինչպես նաև աշակերտների և ուսուցիչների միջև

երեխայակենտրոն մոտեցումների վրա հիմնված հարաբերությունների զարգացման ուղղությամբ կիրառվող մեթոդների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պահանջով գրություն է ուղարկվել իրավասու պետական մարմիններին:

Ի պատասխան՝ ԿԳՄՄՆ-ն տեղեկացրել է, որ ՀՄԿ-ի կողմից շարունակաբար իրականացվում են ուսուցիչների և մասնագետների մասնագիտական կարողությունների արդիականացմանը, հզորացմանը և երեխայակենտրոն կրթական միջավայրի ձևավորմանն ուղղված աշխատանքներ (վերապատրաստումներ, վարպետաց դասեր, խորհրդատվություններ, մենթորական աջակցություն, ուսումնաօժանդակ նյութերի մշակում և այլն):

Նույն հարցադրմանն ի պատասխան՝ իրավասու մյուս մարմինները՝ Երևանի քաղաքապետարանը, մարզպետի աշխատակազմերը նույնպես ներկայացրել են իրենց կողմից կազմակերպվող միջոցառումները, ինչպես նաև՝ հայտնել են ուսուցիչների և դաստիարակների ներգրավմամբ առանձին քննարկումների մասին:

Հարկ է արձանագրել, որ դպրոցներում իրականացվում են որոշ միջոցառումներ, սակայն ներդրված չէ միասնական մոտեցում և բուլինգի հիմնախնդրի ուղղությամբ տարվող աշխատանքները կրում են ոչ պարբերական բնույթ:

Ըստ իրավասու մարմինների ներկայացրած պատասխանների՝ աշակերտների և ուսուցիչների միջև երեխայակենտրոն մոտեցումների ձևավորումն իրականացվում է բացատրական աշխատանքների, մանկավարժական և աշակերտական խորհուրդների աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումներով, կինոդիտումների կազմակերպմամբ: Մինչդեռ, այս առումով հարկ է ընդգծել, որ ՄԻՊ աշխատակազմի դիտարկմամբ՝ դպրոցների մեծ մասում համապատասխան տեխնիկական սարքավորումներ առկա չեն, որով պայմանավորված կինոդիտումների պատշաճ կազմակերպումը գրեթե անհնար է:

Այսպիսով, սույն բաղադրիչի համատեքստում կատարված ուսումնասիրությունների համադրումը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ չնայած ձեռնարկվող քայլերին՝ պետության կողմից

բավարար և միասնական մոտեցմամբ աշխատանք չի կատարվում ուսումնական հաստատություններում կարեկից կրթական միջավայրի ձևավորման ուղղությամբ: Դպրոցում երեխաների նկատմամբ բռնության դեպքերն առհասարակ դժվար բացահայտվող են, ուստի պետք է ստեղծել այնպիսի բարենպաստ միջավայր, որտեղ երեխան իրեն ապահով կզգա և կբարձրաձայնի իր հետ կատարվածի մասին:

Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները հիմնականում խուսափում են հայտնել դպրոցում իրենց նկատմամբ կիրառված բռնության կամ վատ վերաբերմունքի մասին՝ վախենալով հետագայում առավել խստրական վերաբերմունքի արժանանալուց: Դրա մասին են վկայում այն դեպքերը, երբ ծնողը, դպրոցում իր երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման պատճառով և պատշաճ արձագանք չստանալով, փոխում է երեխայի ուսումնական հաստատությունը՝ փորձելով երեխայի համար գտնել առավել բարենպաստ և բռնության բոլոր տեսակներից զերծ միջավայր:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝

- ***գործուն քայլեր ձեռնարկել կրթական ոլորտի մասնագետների մոտ ձևավորված կարծրատիպերը վերացնելու ուղղությամբ,***
- ***ապահովել կրթական գործընթացում ներգրավված կամ որևէ կերպ այդ գործընթացին առնչվող անձանց, այդ թվում ծնողների, պատշաճ իրազեկումը,***
- ***խթանել աշակերտների և ուսուցիչների միջև երեխայակենտրոն մոտեցումների վրա հիմնված հարաբերությունների ձևավորմանը,***
- ***ներդնել ինչպես կրթական հաստատությունների, այնպես էլ՝ երեխաների կողմից կիրառվող երեխայակենտրոն միջավայրի գնահատման մեխանիզմներ և մեթոդաբանություն:***

ԳԼՈՒԽ 4. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ

Բուլինգի դեմ արդյունավետ պայքարի և կանխարգելման համար սկզբունքային նշանակություն ունի հոգեբանական և ֆիզիկական անվտանգ միջավայրը, որտեղ հնարավոր կլինի գործնականում ապահովել երեխայակենտրոն մոտեցումներ, երեխաների համար ընկալելի, մատչելի և հասանելի գործիքակազմեր՝ իրենց հուզող հարցերը, խնդիրները բարձրաձայնելու և դրանց հնարավոր լուծումներ ակնկալելու համար:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են դպրոցներում ֆիզիկական և հոգեբանական բռնությունների դեպքերն ու դրանց հնարավոր պատճառները:

Դպրոցներում հարցազրույցներ են անցկացվել ուսուցիչների և աշակերտների հետ:

Դպրոցներից մեկի ուսուցիչների պնդմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնությունները հիմնականում դրսևորվում են հրմշտոցի, ծեծի, ծաղրի և միմյանց մականուններով դիմելու, երեխայի մեկուսացման և ճնշման ձևերով: Որոշ ուսուցիչներ նշել են, որ դպրոցում բուլինգը հիմնականում դրսևորվում է կատակի կամ խաղի ներքո քողարկված ագրեսիվ վարքագծի, մատների կամ մարմնի այլ հատվածների օգտագործմամբ՝ ժեստերի միջոցով միմյանց վիրավորանք հասցնելու և հարվածելու ձևերով: Վերջիններս նշել են նաև, որ բուլինգի դեպքերը հիմնականում արձանագրվում են բարձր դասարաններում՝ հոգեբանական ճնշման ձևով, իսկ երբեմն էլ՝ արձանագրվում են միմյանցից հեռախոս վերցնելու և գումար պահանջելու դեպքեր: Ուսուցիչները, որպես բուլինգի պատճառ նշել են տանը բռնության ենթարկվելու հանգամանքը, որի հետևանքով դպրոցում բռնության ենթարկված երեխան դառնում է կամ բուլեր կամ բուլինգի զոհ:

Ուսուցիչները հարցազրույցի ընթացքում առանձնացրել են նաև դժվար կառավարելի իրավիճակները: Այսպես, օրինակ, դժվար կառավարելի են դիտարկվել այն դեպքերը, երբ բռնությունը հետևանք է լինում այն բանի, որ երեխան չի կարողանում մոռանալ իր հանդեպ դրսևորված վատ

վերաբերմունքը կամ երբ երեխան ընտանիքում ունի խնդիրներ, որոնք հոգեբանորեն ազդում են վերջինիս վրա, կամ ծնողը չի ընդունում, որ իր երեխան կոնֆլիկտի մասնակից է և թույլ չի տալիս իր երեխային շփվել այլ երեխաների հետ: Որոշ ուսուցիչների պնդմամբ՝ դպրոցում բարդ կառավարելի են այն իրավիճակները, երբ կոնֆլիկտի մասնակիցների վարքագիծը պայմանավորված է տարիքային զարգացման առանձնահատկություններով, կամ կապված են լինում բջջային հեռախոսների պահման կամ օգտագործման հետ: Ուսուցիչների տեղեկացմամբ՝ այն դեպքերին, որոնց իրենք ականատես են լինում, դրանց դեմ պայքարելն ավելի հեշտ է, ի տարբերություն այն դեպքերի, երբ բուլինգը տեղի է ունենում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ: Ուսուցիչները որպես դժվար կառավարելի իրավիճակ են նշել նաև այն դեպքերը, երբ երեխաները չեն ստանում բավարար ուշադրություն ընտանիքում և ազատ ժամանակն անցկացնում են փողոցում, այդ կերպ ձեռք բերում անհարգալից և անզուսպ պահվածք ինչպես ուսուցիչների, այդպես էլ՝ համադասարանցիների նկատմամբ:

Որոշ դպրոցներում ուսուցիչների կողմից դպրոցի հոգեբանական անվտանգ միջավայրն ապահովելու նպատակով կարևորվել է աջակցող անձնակազմի առկայությունը, այդ թվում՝ հոգեբանի: Ուսումնասիրության ընթացքում որոշ դպրոցներում հոգեբանների հաստիքները կամ չեն եղել, կամ թափուր են եղել:

Ուսուցիչների մեծամասնությունն առանձնազրույցների ընթացքում նշել է, որ բարդ կառավարելի իրավիճակներում երբեք չեն դիմում հոգեբան ներգրավելու համար, քանի որ ինչպես իրենք են նշում՝ «փորձից ելնելով մենք էլ ենք հոգեբան»: Այս կապակցությամբ պետք է ընդգծել, որ չնայած երեխաների հետ աշխատանքի տարիների փորձ ունեցող մանկավարժների պրակտիկ հմտություններին, այնուամենայնիվ, վերջիններս չունենալով հոգեբանի մասնագիտական կրթություն և որակավորում, շատ դեպքերում օգնելու փոխարեն կարող են վնասել՝ հատուկ մասնագիտական մեթոդներին չտիրապետելու պատճառով: Այսպես, օրինակ, ուսուցիչներից մեկը նշել է՝ «...երբ խելոք իրենց չեն պահում, վախեցնում եմ, որ ծնողներին ու տնօրենին կասեմ ու նա կպատժվի»: Հարկ է ընդգծել, որ նմանատիպ

մոտեցումը երեխաների մոտ, խնդիրը լուծելու փոխարեն, կարող է ձևավորել վախի զգացում և հնարավորինս խնդիրը թաքցնելու կամ ըմբոստանալու և միտումնավոր ագրեսիվություն ցուցաբերելու վարքագիծ:

Աշակերտների հետ անցկացվել են ֆոկուս խմբային քննարկումներ, որոնց շրջանակում հավաքագրվել են դպրոցներում կատարված տարբեր իրավիճակների մասին տեղեկություններ:

Այսպես, օրինակ, դպրոցի աշակերտներից մեկը տեսանկարահանել էր մեկ այլ աշակերտի ու սպառնում էր, որ ցույց կտա դասղեկին: Դասղեկը տեսանյութը տեսնելուց հետո տեղեկացրել էր, որ այն ցույց կտա աշակերտի մայրիկին: Աշակերտը, ում նկարել էին վիդեո տարբերակով, շարունակ կատակներ էր անում, որոնք դուր չէին գալիս դպրոցի աշակերտներին: Վերջիններս չէին շփվում իր հետ ու բուլինգի էին ենթարկում՝ հալածելով ու ճնշելով: Այս ամենը հանգեցրել էր նրան, որ աշակերտը ցանկանում էր ինքնասպան լինել: Սակայն այժմ այդ աշակերտի հետ հարաբերությունները հարթված են:

Աշակերտների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկումների ընթացում պարզ է դարձել նաև, որ վերջիններս հաճախ ականատես և մասնակից են լինում բուլինգի դեպքերի: Քննարկման ընթացքում նրանք մատնանշել են այն դեպքերը, երբ որևէ համադասարանցու պիտակավորել են և ամբողջ խմբով չեն շփվել վերջինիս հետ: Աշակերտները նշել են, որ առավել հաճախ բուլինգի են ենթարկվում ֆիզիկապես թույլ, քչախոս, ֆիզիկական առանձնահատկություն, տարբերվող արտաքին, խոսքի դժվարություն ունեցող, էժան հագուստ կրող երեխաները: Ըստ երեխաների՝ 14-18 տարեկան աշակերտներն ավելի հաճախ են բուլինգի ենթարկվում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ըստ աշակերտների՝ բուլինգի դեպք նկատելիս նրանք հիմնականում չեն միջամտում, սակայն գիտակցում են, որ այն կանխելու համար առնվազն պետք է խոսել բուլերի հետ, բացատրել դրա վնասակարությունը և արդյունքի չհասնելու դեպքում՝ այդ մասին տեղյակ պահել դասղեկին և տնօրենին:

Ինչ վերաբերվում է բուլինգի պատճառներին, ապա երեխաների տեսակետների հաշվառման համաձայն՝ բուլինգը հիմնականում կատարվում է ինքնավստահությունը բարձրացնելու և բուլինգի զոհի

ինքնագնահատականը իջեցնելու նպատակով, որը կարող է հանգեցնել վատ սովորելուն, միջավայրից մեկուսանալուն, ընդհուպ՝ մինչև ինքնասպանության: Ըստ երեխաների, հիմնականում, բուլինգի ենթարկվում են համեստ վարքագիծ ունեցող աշակերտները:

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում երեխաները նշել են նաև այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են բուլինգը կանխելու համար: Ըստ երեխաների՝ բուլինգը կանխելու համար անհրաժեշտ է.

- իմանալ կռվի պատճառը,
- վերլուծել իրավիճակը,
- համախմբվել խնդրի դեմ պայքարելիս. օրինակ, «եթե դեպքին միջամտում է միայն մեկ հոգի, կա վտանգ, որ նա նույնպես կդառնա բուլինգի զոհ»;
- զրուցել և՛ բուլինգի ենթարկողի, և՛ բուլինգի ենթարկվողի հետ,
- չանտեսել խնդիրը և անհրաժեշտ դիտողություններ անել:

Քննարկումների ընթացքում երեխաները մատնանշել են նաև ուսուցիչների կողմից բուլինգի ենթարկվելու դեպքեր: Օրինակ՝ պարզվել է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին դպրոցներում հաճախ ուսուցիչներն անվանում են «ԿԱՊԿՈՒ»: Դրա հետևանքով տվյալ երեխաներին իրենց անունով դիմելու փոխարեն, մյուս աշակերտները նույնպես սկսել են դիմել «ԿԱՊԿՈՒ»՝ այն համարելով մականուն և շատ դեպքերում՝ չգիտակցելով դրա վնասակարությունը:

Այս առումով չափազանց կարևոր է, որ ուսուցիչները գիտակցեն նմանատիպ մականունների օգտագործման հնարավոր բացասական հետևանքները և իրենց գործունեության ընթացքում բացառեն դրանց օգտագործումը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում տեղի ունեցող հոգեբանական և ֆիզիկական բռնության դեպքերի մասին ահազանգեր են ստացվել նաև ՄԻՊ աշխատակազմում:

Այսպես, օրինակ, ՄԻՊ աշխատակազմ է զանգահարել երեխայի ծնողը և հայտնել, որ դասղեկն իր երեխային հասցրել է հուզական այնպիսի վիճակի, որ վերջինս փորձել է պատուհանից ցած նետվել: Ըստ ծնողի՝ ուսուցչի սխալ և քննադատական մոտեցման հետևանքով երեխան դարձել է

ինքնամփոփ, ունի անապահովության զգացում, արտահայտված վախեր և ցածր ինքնագնահատական:

ՄԻՊ աշխատակազմ դիմած անձանցից մեկն էլ, խնդրելով պահպանել իր մասին տեղեկատվության գաղտնիությունը, հայտնել էր, որ դպրոցի տնօրենն ապտակել է մի երեխայի և սպառնացել, որ վերջինիս կհեռացնի դպրոցից:

Սույն զեկույցի շրջանակում հոգեբանական և ֆիզիկական անվտանգ միջավայրի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը իրավասու մարմիններից պարզաբանումներ է պահանջել այն մասին, թե ինչ քայլեր են ձեռնարկվում ուսումնական հաստատություններում հոգեբանական և ֆիզիկական անվտանգ միջավայրի ապահովման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, իրավասու մարմիններից պահանջվել է հայտնել, թե արդյո՞ք բոլոր դպրոցներն ունեն հոգեբան, թե ոչ, և ունենալու դեպքում՝ պարզաբանել, թե ինչպե՞ս է ապահովվում անվտանգ հոգեբանական միջավայր և տրվում պատշաճ արձագանք բուլինգի դեպքերին:

Այս հարցադրումներին ի պատասխան՝ ՀՀ ԿԳՄՍՆ-ն տեղեկացրել է, որ հոգեբաններ կան 419 դպրոցներում, իսկ դպրոցներում, որտեղ չկան հոգեբաններ, հոգեբանական աջակցությունն իրականացվում է տվյալ տարածաշրջանը սպասարկող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հոգեբանների կողմից: ԿԳՄՍ նախարարության պնդմամբ՝ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» թիվ 79-Ն հրամանի համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ից բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները կունենան առնվազն մեկ հոգեբան:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դպրոցներում հոգեբանների սակավաթիվ ներգրավվածությունն էապես ազդում է երեխաների շրջանում բուլինգի կանխարգելման և բացահայտման աշխատանքների իրականացման վրա:

Ստորև ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությունը դպրոցներում հոգեբանների թվի վերաբերյալ 2023 թվականի ապրիլի 1-ի դրությամբ.

Մարզ	Հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվ	Հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը, որոնցում ներառված են հոգեբաններ	ՏՄԱԿ-ի կողմից սպասարկող դպրոցների թիվը
Արագածոտն	118	52	66
Արմավիր	111	30	ըստ կարիքի
Գեղարքունիք	116	22	ըստ կարիքի
Արարատ	107	15	Մնացածը
Կոտայք	88	28	ըստ կարիքի
Լոռի	149	96	ըստ կարիքի
Շիրակ	146	36	ըստ կարիքի
Սյունիք	111	Նախատեսվում է ներառել 01.09.2023 թ.-ից	ըստ կարիքի
Վայոց	45	7	ըստ կարիքի
Տավուշ	80	24	ըստ կարիքի

Վերոնշյալ հարցադրումներին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ 163 մանկապարտեզների թվով 329 մանկավարժների համար կազմակերպվել են բռնությունից զերծ, երեխայակենտրոն կրթական միջավայր ձևավորելու թեմաներով մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացներ:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ-ում լայն տարածում ունեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնության դրսևորումները, իսկ դրանց պատճառները բազմաբնույթ են,

չվերլուծված, իսկ երբեմն էլ չբացահայտված: Թեև կարևոր քայլ է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում առնվազն մեկ հոգեբան ունենալուն ուղղված պետության կողմից նախաձեռնված բարելավումը, այնուամենայնիվ խնդիրների լուծման ուղղությամբ դեռևս անհրաժեշտ է իրականացնել գործուն և համապարփակ միջոցառումներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝

- ***ուսումնական հաստատություններում հոգեբանների կողմից բուլինգի վերաբերյալ քննարկումներ կազմակերպել ինչպես երեխաների, այդպես էլ՝ մանկավարժական անձնակազմի համար,***
- ***ներդնել դպրոցներում հոգեբանական և ֆիզիկական անվտանգ միջավայրի ապահովման ուղղությամբ հստակ ծրագրեր և միջոցառումներ,***
- ***հաշվի առնել երեխաների տարիքով, սեռով և այլ առանձնահատկություններով պայմանավորված զգայունության գործոնները և ներդնել անհրաժեշտ ընթացակարգեր, որոնք կկիրառվեն բուլինգի յուրաքանչյուր դեպքի պատշաճ արձանագրման համար,***
- ***ապահովել դպրոցի հոգեբանի գործառույթների վերաբերյալ երեխաների շրջանում մատչելի իրազեկում,***
- ***զարգացնել դպրոցի հոգեբանի կարողությունները բուլինգի կանխարգելման, հայտնաբերման և արձագանքման ուղղությամբ:***

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ՝ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ

Բուլինգի դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ են ուղղորդման և աջակցության տրամադրման հստակ մեխանիզմներ: Այն դեպքում, երբ բուլինգի դեմ պայքարի շղթայից բացակայում է հետադարձ կապի և կասկածելի դեպքերի բացահայտման և արձագանքման բաղադրիչը, երկարաժամկետ առումով հնարավոր չի լինում բացառել կամ նվազեցել դեպքերի կրկնողությունը և արդյունավետ աշխատել խորքային պատճառների վերացման ուղղությամբ:

Հաշվի առնելով ուսուցիչների դերի կարևորությունը կասկածելի դեպքերի բացահայտման և արձագանքման հարցում՝ ուսումնասիրության շրջանակում դիտարկվել են հենց նրանց մոտեցումները:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ըստ ուսուցիչների՝ ուղղորդման և աջակցության տրամադրման հարցում իրենց գործունեությունը պետք է հիմնականում ուղղված լինի ուսուցիչների, աշակերտների և նրանց ծնողների միջև փոխըմբռնման դաշտի ձևավորմանը, տեղեկատվական բնույթի զրույցների կազմակերպմանը և ուսուցիչների մասնագիտական հմտությունների բարելավմանը:

Ըստ որոշ ուսուցիչների՝ անհրաժեշտ է բարձրացնել ուսուցչի դերը: Նկատողությունների մեխանիզմն անարդյունավետ է դարձել, բուլինգի դեմ պայքարի լավագույն եղանակը ուսուցչի և աշակերտի միջև ջերմ ընկերական հարաբերությունների ձևավորումն է: Ընդ որում, կարևոր է նաև ուսուցչական անձնակազմի միջև հանդուրժողական և լարվածությունից զերծ հարաբերությունների ամրապնդումը: Այս առումով հարկ է ընդգծել, որ որոշ դեպքերում ուսուցիչները, չտիրապետելով ուսուցման և լսարանի կառավարման արդյունավետ հմտությունների և մեթոդների, հենց իրենք են իջեցնում սեփական հեղինակությունը: Միևնույն ժամանակ, ներկայացվել են դեպքեր, երբ աշակերտների ծնողներն իրենց վարքագծով հեղինակազրկում են մանկավարժներին: Օրինակ, ըստ մանկավարժների՝

եղել է իրավիճակ, երբ աշակերտի ծնողը դասասենյակում երեխաների ներկայությամբ վիրավորել է ուսուցչին:

Այս կապակցությամբ պետք է ընդգծել, որ օրենսդրությամբ սովորողի ծնողը պարտավոր է դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ, որի ապահովման առնչությամբ չափազանց կարևոր է ծնողների հետ հաղորդակցության և իրազեկվածության ծրագրերի ներդրումը:

Ըստ ուսուցիչների՝ ծնողների հետ աշխատանքում հանդիպող դժվարություններից է նաև այն, որ շատերը արտագնա աշխատանքի են մեկնում կամ լրացուցիչ աշխատում են, ինչի հետևանքով դպրոցի հետ հաղորդակցության համար հաճախ անհասանելի են լինում: Այսպիսի երևույթները բացասաբար են անդրադառնում երեխայի վարքագծի և դաստիարակության վրա:

Ուսուցիչները ներկայացրել են նաև խնդիրներ երեխայի վատ վարքագիծը և ցածր առաջադիմությունը լատենտ պահելու հետ կապված: Մասնավորապես, հայտնել են, որ դպրոցի ղեկավարությունն արգելում է ցածր առաջադիմություն ունեցող աշակերտին ցածր գնահատական նշանակել՝ պատճառաբանելով, որ այդ դեպքում որոշ աշակերտներ չեն փոխադրվի հաջորդ դասարան, ինչի հետևանքով դասարաններ կփակվեն, աշխատաժամեր կկրճատվեն և ուսուցիչները կզրկվեն աշխատանքից կամ կնվազի աշխատավարձը:

Բուլինգի դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու համար ուսուցիչներն առաջ են քաշել նաև իրենց սոցիալական վիճակի բարելավման՝ աշխատավարձերի բարձրացման հարցը: Ըստ նրանց՝ ուսուցիչների սոցիալական վիճակը ուղղակի կապ ունի բուլինգի դեմ պայքարի արդյունավետության հետ, քանի որ սոցիալական խնդիրներ ունեցող ուսուցիչը չի կարող սեփական խնդիրների վրա չսևեռվել, փոխարենը՝ ուշադիր և հետևողական լինել այլ անձանց, թեկուզև, երեխաների խնդիրների լուծմանը: Միաժամանակ, ուսուցիչները բուլինգի դեմ պայքարի հարցում ընդգծել են նաև բնակչության սոցիալական վիճակի բարելավման անհրաժեշտությունը:

Ուսուցիչները բուլինգի դեմ պայքարի ապահովման տեսանկյունից կարևորել են աշակերտների մտերմացմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ նշելով միջոցառումներ կազմակերպելու և տարբեր խմբային աշխատանքներ հանձնարարելու անհրաժեշտության մասին: Նրանց կարծիքով անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երեխաները և դպրոցի անձնակազմը, անկախ ուսուցիչների խստապահանջ և հետևողական մոտեցումներից, միմյանց հետ հաղորդակցվեն որպես հավասարը հավասարի: Ուսուցիչների կարծիքով նման միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ է երեխաների հետ պարբերական զրույցներ կազմակերպել, հատկապես նրանց հետ, ովքեր ընդգծված բնավորություն ունեն:

Այս առումով հարկ է փաստել, որ զրույցներ անհրաժեշտ է կազմակերպել նաև խորհրդապահական կարգով՝ ապահովելով երեխաների տրամադրած տեղեկատվության գաղտնիությունն ու բացառելով դրանց արդյունքում երեխաների միջև որևէ լարվածության առաջացումը:

Զգալի է նաև պարբերաբար կրկնվող ռազմական բախումների ազդեցությունը երեխաների վրա: Ըստ ուսուցիչների՝ այդպիսի իրավիճակները ուղղակիորեն ազդում են երեխաների վարքագծի վրա: Նման իրավիճակներում երեխաները ավելի շուտ են հասունանում կամ դառնում՝ զգայուն և խոցելի:

Այս առումով Պաշտպանն արձանագրում է, որ պետությունը պարտավոր է անհրաժեշտ հոգեբանական աջակցություն տրամադրել հատկապես ռազմական գործողությունների ազդեցությունը կրած ընտանիքների երեխաներին, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված, ինչպես նաև գտնվելու վայրն անհայտ կամ գերեվարված անձանց երեխաներին:

Սույն զեկույցի շրջանակներում քննարկվող հարցի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու նպատակով ՄԻՊ աշխատակազմը գրություն է հասցեագրել իրավասու պետական մարմիններին այն մասին, թե արդյոք ուսումնական հաստատություններում առկա է մշտադիտարկող անձնակազմ, որի գործառույթն է հաստատության բոլոր շահառուների, աշխատակիցների և այլ շահագրգիռ անձանց,

կառույցների հետ կանոնավոր աշխատանքի իրականացումը, այդ թվում՝ դեպքերի ուսումնասիրությունը, խնդիրների լուծման հնարավոր առաջարկների մշակումը:

Հարցադրմանն ի պատասխան՝ ԿԳՄՍՆ-ն հայտնել է, որ ՀՄԿ-ն իրականացնում է մշտադիտարկման աշխատանքներ, որոնցում ներգրավված են մասնագետներ տարբեր բաժիններից: Մշտադիտարկումների արդյունքում բացահայտված, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված դեպքերի ուսումնասիրության նպատակով, ՀՄԿ-ում ձևավորվում է աշխատանքային խումբ՝ դեպքերի ուսումնասիրության, խնդիրների լուծման հնարավոր առաջարկների մշակման նպատակով: Նույն հարցադրմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ ուսումնական հաստատություններում բոլոր շահառուների, աշխատակիցների և այլ շահագրգիռ անձանց, կառույցների հետ աշխատանքի համակարգումը վերապահված է դպրոցի տնօրինությանը: Դեպքերի ուսումնասիրությանը և խնդիրների լուծման հնարավոր առաջարկների մշակումն իրականացվում է դպրոցի տնօրինության համակարգմամբ՝ ըստ անհրաժեշտության ներգրավելով շահառու և շահագրգիռ կողմերի՝ սովորողներ, դասղեկներ, առարկայական ուսուցիչներ, մասնագետներ, ծնողներ, համագործակից կառույցների ներկայացուցիչներ: Ինչ վերաբերում է մարզային ենթակայության ներքո գործող դպրոցներին, ապա հարկ է նշել, որ ՀՀ Տավուշի մարզի, Արմավիրի մարզի և Արագածոտնի մարզի դպրոցներում մշտադիտարկող անձնակազմեր առկա չեն, իսկ Շիրակի մարզի վերաբերյալ սույն հարցադրմանը պատասխան չի ներկայացվել:

Ընդհանուր առմամբ, իրավասու մարմնի կողմից տրված պատասխանները վկայում են, որ բուլինգի դեպքերի բացահայտման և արձագանքման հստակ մեխանիզմներ մարզերում ներդրված չեն, մշտադիտարկման համար պատասխանատու աշխատակիցներ առանձնացված չեն, իսկ աշխատանքները կազմակերպվում են միայն հանրակրթական ուսումնական հաստատությունների անձնակազմերի, ըստ անհրաժեշտության՝ ներառելով նաև երեխայի պաշտպանության պատասխանատու մարմիններին:

Այսպիսով, ամփոփելով սույն բաղադրիչի ուսումնասիրությունները, հարկ է ընդգծել, որ պետությունը՝ ի դեմս պատասխանատու կառույցների, չունի հաշվետու մեխանիզմներ բուլինգի դեմ պայքարի գործընթացում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***յուրաքանչյուր կրթական հաստատությունում նախատեսել մշտադիտարկող անձնակազմ, որի գործառույթը կլինի հաստատության բոլոր շահառուների, աշխատակիցների և շահագրգիռ կառույցների հետ կանոնավոր աշխատանքի իրականացումը, այդ թվում՝ դեպքերի ուսումնասիրությունը, խնդիրների լուծման հնարավոր առաջարկների մշակումը և ներկայացումը,***
- ***ներդնել երկարաժամկետ կիրառման համար մոնիթորինգային մեխանիզմներ, այդ թվում՝ գրավոր հաշվառման ձևով, որոնք կկրեն մշտական բնույթ և չեն ձևավորվի ըստ անհրաժեշտության, այն է՝ «դեպքից դեպք» սկզբունքով,***
- ***ներդնել բոլորի համար հասանելի մեխանիզմներ՝ անկախ տարիքից, կարողություններից և այլ անձնային հատկանիշներից: Նման մեխանիզմների մշակման ընթացքում հատկապես պետք է հաշվի առնվեն առավել խոցելի խմբերի կարիքները և առանձնահատկությունները,***
- ***ապահովել ներդրված մեխանիզմների վստահելիությունը գործընթացում ներգրավված բոլոր օղակների համար՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի կարիքները և մտահոգություններ:***

ԳԼՈՒԽ 6. ԲՈԼՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Բուլինգի դեմ արդյունավետ պայքարի և կանխարգելման համար առանձնահատուկ կարևորություն ունի բոլոր դերակատարների ներգրավումը՝ անկախ վերջիններիս դիրքից, գործառույթից կամ մասնակցության աստիճանից: Այս համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ուսումնական հաստատություններում բուլինգի շղթան գործնականում ունի առնվազն յոթ դերակատար. նախաձեռնողներ, թիրախավորված անձինք, ականատեսներ, վերահսկողներ, ուսուցիչներ (մասնագիտական անձնակազմ), պատասխանատուներ (վարչական անձնակազմ) և արտաքին դերակատարներ (տեղական, տարածքային և պետական կառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ, ընտանիք և ընկերներ):

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է, որ ուսուցիչները բուլինգի առկայության դեպքում հիմնականում միջամտում են և պահանջում իրավիճակի դադարեցում, ապա զրուցում բռնություն գործադրած և բռնության զոհ դարձած երեխաների հետ, իսկ առավել քիչ թվով ուսուցիչներ փորձում են խնդրի իրողությունը պարզել այլ աղբյուրներից, այնուհետև՝ զեկուցում են ուսումնական հաստատության տնօրենին և իրավիճակի կարգավորման նպատակով հրավիրում են այլ մասնագետների՝ սոցիալական մանկավարժների, հոգեբանների և այլն: Ինչ վերաբերում է ուսումնական հաստատությունում խնդրի առկայության դեպքում տնօրենին դիմելու ազատությանը, ապա այս առումով, ուսուցիչները և աջակցող անձնակազմը գրեթե բոլոր դպրոցներում ազատ են դիմելու դպրոցի տնօրինությանը երեխաների վարքագծի հետ կապված հարցեր քննարկելու համար:

Որոշ ուսուցիչներ ներկայացրել են, որ խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն ունի ծնողների ներգրավումը: Ծնողների հետ հանդիպումները հիմնականում կրում են ֆորմալ բնույթ, քանի որ նրանց հետ քննարկվում են միայն երեխաների առաջադիմության և վարքային

խնդիրները: Որոշ ուսուցիչներ էլ հայտնել են, որ եղել են դեպքեր, երբ ծնողը էլ ավելի է բարդացրել և սրել իրավիճակը: Օրինակ, ուսուցչի կողմից աշակերտին որևէ նկատողություն անելու պարագայում ծնողներից որոշները չեն ցանկանում անգամ տեղեկանալ դրա պատճառի մասին, ընդհակառակը՝ անշեղորեն և առանց հիմնավորման պնդում են, որ իրենց երեխայի վարքագիծը միանգամայն նորմալ է: Անգամ դեպք է եղել, երբ ծնողը ընդհատել է դասապրոցեսը և այլ աշակերտների ներկայությամբ արհամարհական և կոպիտ վերաբերմունք է ցուցաբերել ուսուցչի նկատմամբ և հայտարարել հետևյալը. «... երեխաս այլևս քո դասերին չի նստելու, իրեն այլ խումբ եմ տեղափոխում»:

Ասվածի կապակցությամբ հարկ է փաստել, որ նշվածի պատճառը, ի թիվս այլնի, հիմնականում դպրոցներում ծնողների հետ համագործակցային, մասնակցային միջավայրի, ծնողների համար նախատեսված տեղեկատվական անկյունի բացակայությունն է՝ ապահովելով երեխայի կրթության արդյունավետ կազմակերպման հարցում ծնողների ներգրավվածությունը:

Հարկ է ընդգծել, որ ֆոկուս խմբային քննարկման հարցման արդյունքները վկայում են նաև, որ դպրոցներում երեխաների նկատմամբ բռնություն է կիրառվում նաև ուսուցիչների կողմից, այդ թվում՝ հոգեբանական և ֆիզիկական բռնության ձևով: Օրինակ՝ ծնողը տեղեկացրել է, որ երեխային տեղափոխել է այլ դպրոց՝ վերջինիս նկատմամբ առողջական խնդիրներով պայմանավորված բուլինգի դրսևորման պատճառով: Ըստ նրա՝ երեխային դասղեկն առանձին է նստեցրել, այնուհետև դասարանում քվեարկություն կազմակերպել և հորդորել երեխաներին ձեռք բարձրացնել երեխային դպրոցից հեռացնելու հարցին քվեարկելու նպատակով: Դպրոցի տնօրենը նշվածի կապակցությամբ հայտնել է ծնողին, որ «հաստատությունը մասնավոր հիմունքներով է գործում և դրա գործունեությունն իր համար զուտ բիզնես է և իրեն չի հետաքրքրում երեխայի վիճակը»: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների այն հարցին, թե ինչո՞վ է պայմանավորված՝ դպրոցում կրթության առանձնահատուկ պայմաններ, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաներ չունենալը՝ տնօրենը նշել է.

«...ինձ նման երեխաներ պետք չեն և չեմ պատրաստվում նման երեխաներ ընդունել դպրոց»:

Հարկ է արձանագրել նաև, որ ուսումնասիրության ընթացում ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների անձնակազմերը՝ ի համեմատ պետական ուսումնական հաստատությունների, իրազեկված չեն եղել Մարդու իրավունքների պաշտպանի կոնվենցիոն մանդատի դերի ու նշանակության մասին՝ չկարևորելով նաև խտրական մոտեցումների բացառման և երեխայի «լավագույն շահի» ապահովման սկզբունքը: Բացի այդ, եղել են դեպքեր, երբ ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների անձնակազմերը հրաժարվել են Պաշտպանի աշխատակազմի հետ զրույցներից՝ հիմքում դնելով ոչ պետական լինելու և ցանկացած վերահսկողությունից դուրս լինելու հանգամանքները:

Սույն զեկույցի շրջանակներում քննարկվող հարցի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու նպատակով ՄԻՊ աշխատակազմը գրություն է հասցեագրել իրավասու պետական մարմիններին՝ պահանջելով պարզաբանել, թե բուլինգի բացահայտման և արձագանքման դեպքերում ինչպես է իրականացվում ուսումնական հաստատության և արտաքին դերակատարների ներգրավումը, ինչպես նաև ներդրված է արդյո՞ք խրախուսող կամ խթանող մեխանիզմ՝ դպրոց-ընտանիք կապը ամրապնդելու համար:

Նշված հարցադրմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ բուլինգի բացահայտման դեպքում ուսումնական հաստատության և արտաքին դերակատարների ներգրավումն իրականացվում է պաշտոնական գրագրությամբ, իսկ դպրոց-ընտանիք կապն ամրապնդելուն միտված տարաբնույթ նախաձեռնություններ նախատեսվում և իրականացվում են բոլոր դպրոցների տարեկան աշխատանքային պլանի շրջանակում:

ՏԿԵՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ դպրոցներում դպրոց-ընտանիք կապի ամրապնդման ուղղությամբ մեխանիզմ ներդրված չէ: Դպրոց-ընտանիք կապը ուսումնական հաստատություններում իրականացվում է ներքին կարգապահական կանոնների և ուսումնական

հաստատության օրինակելի կանոնադրության համաձայն՝ դպրոցի տնօրենի, դասղեկի և ծնողների համագործակցության միջոցով: Անհրաժեշտության դեպքում դպրոց-ընտանիք կապի ամրապնդման աշխատանքներին ներգրավվում են նաև մարզպետի աշխատակազմերի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետներ՝ հոգեբան, սոցիոլոգ, բժիշկ, իրավաբան, ինչպես նաև գործընկեր հասարակական կազմակերպությունների մասնագետներ: Բացի այդ, որոշ դպրոցներում անցկացվում են ընտանիքի օրվան նվիրված սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ, արշավներ, իրականացվում են նաև համադպրոցական ծնողական ժողովներ, դասարանական մշտական ծնողական ժողովներ, ծնողներին տրամադրվում են անհատական և խմբային խորհրդատվություն:

Հատկանշական է, որ որոշ մարզերի վերաբերյալ ՏԿԵՆ-ի տրամադրած տեղեկատվությամբ նշվել է բուլինգի դեպքերի բացակայության մասին: Մինչդեռ՝ ի տարբերություն նշված տեղեկատվությանը՝ ՄԻՊ աշխատակազմում ստացվել են բուլինգի վերաբերյալ հենց այդ մարզերի դպրոցների աշակերտներից և նրանց ծնողներից բողոքներ: Օրինակ՝ ծնողներից մեկը տեղեկացրել է, որ իր երեխան չի ցանկանում հաճախել դպրոց, քանի որ վերջինս ամիսներ առաջ ենթարկվել է սեռական բռնության, որի պատճառով իրեն դպրոցում վատ են վերաբերվում: Ըստ ծնողի՝ իր երեխայի հետ կատարվածի մասին տեղեկությունը տարածվել է ինչպես համայնքում, այդպես էլ դպրոցում, իսկ երեխայի դասղեկը հեռախոսազանգով իրեն ասել է՝ «... տներդ ծախի՛ր, փախի՛ր...»: Սույն բողոքով՝ ծնողը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր երեխային այլ դպրոց տեղափոխելու հարցում և նշել, որ երեխային այլ դպրոց է տեղափոխում արդեն երրորդ անգամ: Տվյալ դեպքում, ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցչի կողմից երեխայի ծնողին պարզաբանվել է, որ երեխային՝ դպրոցում իր նկատմամբ դրսևորվող վատ վերաբերմունքի պատճառով այլ դպրոց տեղափոխելը չի բխում նրա լավագույն շահից և անհրաժեշտ է խնդրին ցուցաբերել այլ մեթոդաբանական մոտեցում: Ավելին, նրան պարզաբանվել է, որ պետությունը պարտավորություն ունի ապահովել երեխայի կրթության իրավունքը ամեն տեսակի բռնությունից զերծ

միջավայրում: ՄԻՊ աշխատակազմից կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր, որոնց արդյունքում երեխան չի տեղափոխվել այլ դպրոց:

Մեկ այլ դեպքում, ծնողներից մեկը տեղեկացրել է, որ իր երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, իսկ դպրոցի փոխտնօրենն իրեն հայտնել է, որ իր երեխան խաթարում է դպրոցի անդորրը և վախեցրել, որ եթե չի ցանկանում, որ իրավիճակն ավելի սրվի, պետք է վերջինս իր երեխային տեղափոխի այլ դպրոց: Ըստ երեխայի ծնողի՝ փոխտնօրենը նաև նշել է, որ պետությունը դպրոցին ներառական կրթության իրականացման համար ոչնչով չի օժանդակել և հատուկ մասնագետներով չի ապահովել: ՄԻՊ աշխատակազմի միջամտությամբ խնդիրը կարգավորվել է, մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչները մարզպետի լիազորությունների շրջանակում աշխատանքներ են իրականացրել դպրոցի աշխատակազմի, երեխայի և ծնողի հետ, որի արդյունքում երեխան շարունակել է իր կրթությունը տվյալ դպրոցում:

ԿԳՄՍ նախարարությունը հարցադրմանն ի պատասխան հայտնել է, որ բուլինգի մասին տեղեկացվում է ՀՄԿ-ը, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրում է մասնագետներ: ԿԳՄՍՆ-ն բուլինգի բացահայտման մեխանիզմների վերաբերյալ նշել է, որ լիազորող նորմի բացակայության պատճառով հանրակրթական ուսումնական հաստատությունները չունեն բուլինգի բացահայտման և արձագանքման համակարգված մեխանիզմներ, փաստագրում և արձանագրում:

Այս կապակցությամբ ՄԻՊ աշխատակազմը կրկին ընդգծում է, որ գործող իրավակարգավորումների համատեքստում էլ հնարավոր է մշակել և ներդնել բուլինգի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ: Տվյալ դեպքում հարկ է նշել, որ կրթության ոլորտի պատասխանատու կառույցի նման մեկնաբանությունը կարող է նպաստել բուլինգի դեպքերի նկատմամբ կարծրատիպային մոտեցումներ ցուցաբերելուն և նման մոտեցումներով օրինակելի դառնալ հանրության շրջանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***բուլինգի բացահայտման և արձագանքման գործընթացներում ապահովել բոլոր դերակատարների ներգրավվածությունը,***
- ***բուլինգի բացահայտման և արձագանքման գործընթացներում բոլոր դերակատարների ներգրավվածության ապահովման նպատակով նախատեսել հստակ գործողություններ,***
- ***ներդնել դպրոց-ընտանիք կապը հաստատելու կամ ամրապնդելու համար խրախուսող կամ խթանող մեխանիզմներ:***

ԳԼՈՒԽ 7. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ երեխայի ընտրությամբ: Ընդ որում՝ այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, սակայն այդ սահմանափակումները կարող են լինել միայն այնպիսիք, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են այլ անձանց իրավունքները և հեղինակությունը հարգելու, կամ պետական անվտանգությունը կամ հասարակական կարգը (ordre public), կամ բնակչության առողջությունը, կամ բարոյականությունը պաշտպանելու համար:

Ուսումնասիրության ընթացքում երեխաների հետ տեղի ունեցած զրույցներից պարզ է դարձել, որ նրանք հիմնականում տեղյակ չեն բուլինգի, դրա անթույլատրելիության և վնասակար ազդեցության մասին:

Բուլինգի մասին երեխաներին տեղեկատվություն տրամադրելուց հետո նրանք ներկայացրել են բուլինգի բազմաթիվ դրսևորումների մասին տվյալներ, որոնք տեղի են ունենում իրենց դպրոցներում, դասարաններում:

Երեխաների հետ քննարկման ընթացքում հնչած կարծիքները վկայում են, որ բուլինգի դրսևորումները հաճախ հանդիպում են միևնույն սեռի ներկայացուցիչների միջև և տղաների կողմից աղջիկների նկատմամբ բուլինգի դեպքերը գրեթե բացակայում են: Հարցումներին մասնակցած երեխաները նշել են նաև, որ իրենց դասարաններում առավել հաճախ բուլինգի են ենթարկվում հաշմանդամություն ունեցող երեխաները, հատկապես մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցողները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ աշակերտների զգալի մասի կարծիքով բուլինգի ենթարկվող անձը մեղավոր է, քանի որ վերջինս

չպետք է թույլ տա իր նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորում, այլ հակառակը, պետք է պատասխան տա:

Տնօրենների կողմից նշվել են դեպքեր, երբ աշակերտների միջև առաջացած խնդիրները ավելի հեշտությամբ լուծվել են բարձր դասարանցիների ներգրավման և միջամտության արդյունքում:

Այս առումով պետք է փաստել, որ նման ձևով խնդիրների կարգավորումը պարունակում է բարձր ռիսկայնություն ինչպես խնդիրը լուծելու, այնպես էլ ներգրավված երեխաների շրջանում նոր բուլինգի դրսևորումների և միջանձնային կոնֆլիկտների առաջացման համար նախապայմաններ ստեղծելու հարցում:

Հարկ է փաստել, որ դպրոցներում կարևոր է նաև հոգեբանական աշխատանքի պատշաճ ներդրումը, որը կձևավորի երեխաների մոտ առողջ հոգեբանական միջավայր, կոնֆլիկտներն արդյունավետ հաղթահարելու, ինչպես նաև դիմացինին ապրումակցելու և աջակցելու հատկանիշներ: Ինչ վերաբերում է երեխաների իրավագիտակցության բարձրացմանը, ապա հարկ է նշել, որ աշակերտների շրջանում պետք է կատարել իրազեկման աշխատանքներ և պարզաբանել, որ բռնության յուրաքանչյուր դրսևորում անթույլատրելի է:

Հարկ է փաստել, որ դպրոցներից մեկում, որտեղ իրականացվել են իրազեկման աշխատանքներ, կազմակերպված ֆոկուս խմբային քննարկման ընթացքում աշակերտները բավականին տեղեկացված են եղել բուլինգի և դրա վնասակար ազդեցությունների մասին: Ըստ երեխաների՝ դպրոցի անձնակազմի կողմից նախաձեռնվել են բուլինգի իրազեկման վերաբերյալ դասընթացներ, որոնք կազմակերպվել են աշակերտական խորհրդի կողմից: Քննարկմանը մասնակցած երեխաները տեղյակ են եղել բուլինգի տեսակների, մասնավորապես՝ կիբերբուլինգի մասին: Մասնակից երեխաներից մեկի տեղեկացմամբ՝ ինքը ենթարկվել է կիբերբուլինգի: Նա նշել է, որ էլեկտրոնային եղանակով իր նկարը փոփոխել են, որից հետո այն ուղարկել իրեն և սպառնացել, որի կապակցությամբ իր հայրը դիմել է ոստիկանություն:

Նշված քննարկման ընթացքում որոշ երեխաներ նշել են, որ բուլինգի պատճառ կարող է լինել դիմացինի նկատմամբ ոչ հարգալից

վերաբերմունքը: Անդրադառնալով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բուլինգի դրսևորումներին՝ երեխաները նշել են, որ իրենց դպրոցում բուլինգ չի իրականացվում, քանի որ թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների կողմից նկատելի է գիտակցված վերաբերմունք, ավելին՝ բոլորը պատրաստակամ օգնում են նրանց:

Այն հարցին, թե բուլինգի դեպքերում նրանք դիմում են կամ կդիմեն արդյո՞ք ուսուցիչներին, երեխաները պատասխանել են՝ ոչ, քանի որ նման քայլը կորակավորվի որպես մատնում, իսկ որոշները նշել են, որ իրենց կողմից բուլինգի մասին չտեղեկացնելը պայմանավորված է իրենց անտարբերությամբ: Այն հարցին, թե ո՞ւմ կդիմեն խնդրի դեպքում, եթե ոչ ուսուցիչներին՝ երեխաները հայտնել են, որ սկզբից իրենք կփորձեն լուծում տալ խնդրին, այնուհետև, չլուծվելու դեպքում, կդիմեն իրենց մեծ եղբայրներին կամ ծանոթներին, բայց ոչ ծնողներին կամ ուսուցիչներին:

Սույն զեկույցի շրջանակներում քննարկվող հարցի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու նպատակով ՄԻՊ աշխատակազմը պարզաբանումներ է պահանջել իրավասու մարմիններից այն հարցի կապակցությամբ, թե ուսումնական հաստատություններում ի՞նչ եղանակով է իրականացվում բուլինգի վերաբերյալ իրազեկումը երեխաների շրջանում:

Այս համատեքստում ԿԳՄՍՆ-ն հայտնել է, որ բուլինգի վերաբերյալ իրազեկումը սովորողների շրջանում իրականացվում է տեսաֆիլմերի դիտման և դրանց շուրջ քննարկումների, ինտերակտիվ ներկայացումների միջոցով, որոնց ընթացքում երեխաները դառնում են ներկայացման ակտիվ մասնակիցները:

Երևանի քաղաքապետարանը վերոնշյալ հարցադրմանը պատասխանել է, որ Երևանի ենթակայության ներքո գործող բոլոր դպրոցներում կազմակերպվել են երեխաների իրավունքների իրազեկման միջոցառումներ՝ «Իմ իրավունքներն իմ աչքերով» խորագրով, որոնց շրջանակում արծարծվել են նաև բռնությունից զերծ կրթական միջավայրի ապահովմանն առնչվող հարցեր:

Նշված հարցադրմանը ՏԿԵՆ-ը պատասխանել է, որ մարզային ենթակայության ներքո գործող դպրոցներում երեխաների շրջանում

բուլինգի մասին իրազեկումն իրականացվում է դասընթացների, դասղեկի ժամերի, իրազեկման հանդիպումների, զրույցների, քննարկումների, աշակերտական խորհրդի նիստերի, տեսանյութերի դիտման, պաստառների պատրաստման միջոցով: Որոշ մարզերի դպրոցներում իրականացվել է «Բռնությունը փոխարինենք սիրով» թեմայի քննարկումներ, պատրաստվել են պաստառներ «Հասարակագիտություն» առարկայի շրջանակում:

Ուսումնասիրության շրջանակում իրականացված հարցումների հիման վրա իրականացվել է աշակերտների ինքնագնահատման սանդղակի քանակական վերլուծություն: Վերլուծության արդյունքները վկայում են, որ ամենաբարձր ցուցանիշները դրսևորվել են բարկացած լինելու և միմյանց հարվածելու հարցման պատասխաններում, իսկ ամենացածրը՝ այլ անձանց կռիվ անելը խրախուսելու[7]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***երեխաների շրջանում իրազեկում իրականացնել բուլինգի վերաբերյալ,***
- ***կազմակերպել համատեղ միջոցառումներ՝ բուլինգի մասնակիցների ներգրավմամբ,***
- ***ապահովել երեխաների կարողությունների զարգացումը և բացառել երկակի ստանդարտների կիրառումը,***
- ***հատուկ ուշադրություն դարձնել բուլինգի կանխարգելման ռազմավարությունների մշակման և իրականացման գործում երեխաների ներգրավմանը[8],***
- ***բուլինգի բացահայտման դեպքում աշխատանք կատարել ոչ միայն բուլինգի ենթարկված երեխայի, այլ նաև մյուս դերակատարների հետ:***

---

[7] Տե՛ս հավելված 5-ը:

[8] Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդամները կարծում են, որ բուլինգի դեպքերը դպրոցներում նվազեցնելու համար անհրաժեշտ է ստեղծել տեղեկատվական խաղեր, երգեր՝ ուղղված բուլինգի դեմ պայքարին, իսկ դպրոցական դասագրքերում՝ ներառել փոքրիկ հոդվածներ:

ԳԼՈՒԽ 8. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բուլինգի դեմ պայքարի նպատակով «Ամբողջական կրթական մոտեցման» ձևաչափի ներդրման արդյունավետությունը գործնականում հնարավոր է միայն կանոնավոր և թիրախային միջգերատեսչական համագործակցության պայմաններում: Հաշվի առնելով իրականացվելիք գործողությունների համակարգվածության անհրաժեշտությունը, շահագրգիռ բոլոր կողմերն իրենց ջանքերը պետք է միավորեն խնդրի արագ արձագանքման, բացասական հետևանքների կանխարգելման և դեպքերի կրկնողությունը բացառելու հարցում: Ընդ որում՝ «Ամբողջական կրթական մոտեցման» ձևաչափը ենթադրում է ոչ միայն միջգերատեսչական (օրինակ՝ ուսումնական հաստատության, ՏԻՄ-ի, տարածքային և պետական կառավարման մարմինների միջև), այլ նաև՝ միջոլորտային (օրինակ՝ կրթական–սոցիալական ոլորտների միջև) և ոլորտային (ուսումնական հաստատությունների, ոչ ֆորմալ կրթություն իրականացնող հասարակական կազմակերպությունների–արտաուսումնական խմբակների միջև) ակտիվ համագործակցություն:

Այս համատեքստում անհրաժեշտ է կանոնակարգել միջգերատեսչական համագործակցությունը գործնականում, այն է՝ հստակեցնել տեղեկությունների և տվյալների փոխանակման ընթացակարգը, այդ թվում՝ մշակել տվյալների հաշվառման մեկ միասնական չափորոշիչ, ներդնել փոխօգնության գործուն մեխանիզմ, որը նաև հնարավորություն կտա արագ նույնականացնել շահառուներին, որոշել վերաբերելի կառույցներին և դերակատարներին՝ բացառելով գործողությունների/ծրագրերի կրկնողությունը կամ վերածածկերը:

Այսպես, ուսումնասիրության շրջանակում ուսուցիչների հարցման արդյունքների հիման վրա արձանագրվել է, որ դպրոցներում հիմնականում չեն համագործակցում այլ գերատեսչության մասնագետների հետ, բացառությամբ՝ որոշ դպրոցներում աշխատակազմի կողմից գնահատված անհրաժեշտությամբ պայմանավորված սոցիալական մանկավարժների և հոգեբանների հետ համագործակցության դեպքերի:

Ուսումնասիրության ընտրանքում ներառված դպրոցների ուսուցիչների մեծամասնության պնդմամբ իրենց դպրոցներում բուլինգի դեպքերի բացակայությամբ պայմանավորված համագործակցության անհրաժեշտություն չկա: Արձանագրվել է միայն մեկ դեպք, երբ հարցումների ընթացքում ուսուցիչը հայտնել է հոգեբանի հետ համագործակցության մասին:

Ուսումնասիրության շրջանակում արձանագրվել են նաև դպրոցների կողմից աշակերտներին ոստիկանություն ուղղորդելու դեպքեր: Օրինակ, դպրոցներից մեկում ուսուցիչները տեղեկացրել են, որ համագործակցում են ոստիկանության ներկայացուցիչների հետ այն դեպքերում, երբ երեխաների կողմից միմյանց հարվածելու դեպքերը վերածվում են ծեծի: Նման մի դեպքի վերջնարդյունքը եղել է այն, որ ծնողը երեխային տեղափոխել է այլ միջին մասնագիտական քոլեջ, ինչը խնդրի լուծմանն ուղղված ոչ կառուցողական և երեխայի լավագույն շահից չբխող մոտեցում է:

Ամփոփելով հարցման արդյունքները՝ հարկ է փաստել, որ ընտրանքում ներգրավված դպրոցների մեծամասնության անձնակազմի և այլ իրավասու մարմինների միջև բացակայում է ինչպես միջգերատեսչական, այնպես էլ ոլորտային և միջոլորտային համագործակցությունը:

Սույն զեկույցի շրջանակներում քննարկվող հարցի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցադրումներ են ուղարկվել իրավասու պետական մարմիններին այն մասին, թե բուլինգի դեպքերի վարման գործընթացում ո՞ր կառույցների հետ է ստեղծվում համագործակցություն և ի՞նչ խնդիրներ են ի հայտ գալիս այդ ընթացքում: Միևնույն ժամանակ, տեղեկություններ է պահանջվել այն մասին, թե արդյո՞ք կազմակերպվել են այլ գերատեսչությունների հետ քննարկումներ բուլինգի վերաբերյալ, և եթե այո՝ ի՞նչ մեխանիզմներ են ներդրվել քննարկումների արդյունքներով պայմանավորված:

Վերոնշյալ հարցադրումներին ի պատասխան՝ ԿԳՄՍՆ-ն հայտնել է, որ նախարարությունը համագործակցում է տարբեր գերատեսչությունների հետ, մասնավորապես՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության, Ներքին գործերի նախարարությունների

համապատասխան ստորաբաժանումների, համայնքային կառույցների, տեսչական մարմնի, ըստ անհրաժեշտության նաև՝ հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ: ԿԳՄՍՆ-ի տեղեկացմամբ՝ առավել առարկայական դերակատարում ունի ՀՄԿ-ն, որն ակտիվ համագործակցում է ուսումնական հաստատությունների, ՏՄԱԿ-ների, կրթության ոլորտում տարբեր դերակատարում ունեցող կառույցների, շահագրգիռ այլ մարմինների հետ:

Նույն հարցադրումներին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը նշել է, որ բուլինգի դեպքի վարման ընթացքում համագործակցության շրջանակը ներառում է ԿԳՄՍՆ-ն, Կրթության տեսչական մարմինը, ՏՄԱԿ-ները, ՀՄԿ-ները, Ոստիկանությանը և այլ կառույցներ:

Ինչ վերաբերվում է մարզային ենթակայությամբ գործող դպրոցներին, ապա այս առումով ՏԿԵՆ-ը տեղեկացրել է, որ մարզպետի աշխատակազմերը բուլինգի դեպքերի վարման ընթացքում համագործակցում են համայնքապետարանի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՄՄԾ-ի, Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ: Մարզպետի աշխատակազմերի տված որոշակի պարզաբանումների համաձայն՝ մարզային ենթակայությամբ գործող դպրոցներում բուլինգի դեպքեր չեն արձանագրվում և ըստ այդմ՝ միջգերատեսչական համագործակցություն ձևավորված չէ:

Ամփոփելով սույն բաղադրիչի շրջանակում իրականացված ուսումնասիրության արդյունքները՝ հարկ է փաստել, որ բազմաթիվ են իրավիճակները, երբ համագործակցային միջավայրի ձևավորման փոխարեն՝ պետական իրավասու մարմինները և դպրոցների աշխատակազմերը փորձում են քողարկել բուլինգի դեպքերը և խնդրի լուծման պարտականությունը վերագրել այլ մարմինների իրավասությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

❖ ***կանոնակարգել միջգերատեսչական համագործակցությունը գործնականում, այն է՝ հստակեցնել տեղեկությունների և***

տվյալների փոխանակման ընթացակարգը, այդ թվում՝ մշակել տվյալների հաշվառման մեկ միասնական չափորոշիչ, ներդնել փոխօգնության գործուն մեխանիզմ, որը նաև հնարավորություն կտա արագ նույնականացնել շահառուներին, որոշել վերաբերելի կառույցներին և դերակատարներին՝ բացառելով գործողությունների, ծրագրերի կրկնողությունը կամ վերածածկերը,

- *բուլինգի վերաբերյալ պարբերաբար կազմակերպել միջգերատեսչական քննարկումներ և համագործակցության մեխանիզմներ,*
- *բարձրաձայնել բուլինգի բացահայտման դեպքերի լուծման ընթացքում ի հայտ եկած միջգերատեսչական համագործակցության խնդիրները և համատեղ մշակել խնդիրի լուծմանն ուղղված քայլեր:*

ԳԼՈՒԽ 9. ՓԱՍՏԱԳՐՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Երեխաների նկատմամբ բուլինգի դեմ պայքարի արդյունավետության ապահովման տեսանկյունից էական նշանակություն ունեն ուսումնական հաստատություններում և կրթական համակարգի այլ օղակներում պարբերական մշտադիտարկումները և արագ արձագանքման գործուն, հասանելի մեխանիզմների առկայությունը: Այս նպատակով անհրաժեշտ է մշակել կանխարգելիչ և միջամտող գործիքներ, դրանց կիրառության հստակ մեթոդաբանություն և դեպքերի գնահատման ցուցանիշներ: Ընդ որում՝ հատկապես կարևոր է, որ մշտադիտարկման և գնահատման գործընթացը ներառի երեխաներին, ուսուցչական անձնակազմին և հատուկ անդրադառնա նաև դպրոցական միջավայրին:

Սույն բաղադրիչի ուսումնասիրության շրջանակում իրականացված այցերի ընթացքում պարզվել է, որ ըստ ուսուցիչների մեծամասնության կարծիքների՝ երեխաների շրջանում միմյանց նկատմամբ բուլինգը դրսևորվում է տարվա մեջ մի քանի անգամ կամ ամեն ամիս հաճախականությամբ կամ ընդհանրապես իրենց դպրոցում բուլինգի դեպքեր չկան: Միևնույն ժամանակ արձանագրվել են ուսուցիչների տեսակետներ այն մասին, որ դպրոցում բուլինգի դեպքեր լինում են ամեն օր կամ ամեն շաբաթ կամ շաբաթը երկու անգամ:

Հարկ է փաստել նաև, որ ուսումնասիրության ընտրանքում ներառված դպրոցներից որևէ մեկում չի եղել երեխաների վարքագծի, այդ թվում՝ բուլինգի դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ: Դպրոցներում առանձնացված չեն նաև աշակերտների համար նախատեսված քննարկումների տարածքներ:

Նման տեղեկատվության ոչ հստակությունը և փաստաթղթավորված չլինելը վկայում են բուլինգի դեպքերի փաստագրման հստակ մեխանիզմի բացակայության մասին:

Սույն զեկույցի շրջանակներում քննարկվող հարցի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցադրումներ են ուղարկվել իրավասու պետական մարմիններին այն մասին, թե ինչպես է պետությունը կատարում բուլինգի դեպքերի փաստագրումը և քանի

բուլինգի դեպք է արձանագրվել ու պատշաճ ընթացք տրվել պատասխանատու մարմինների կողմից 2021 թվականից մինչև 2023թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Ի պատասխան նշված հարցադրման՝ ԿԳՄՍՆ-ն տեղեկացրել է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունները չունեն բուլինգի բացահայտման և արձագանքման համակարգված մեխանիզմներ, չեն իրականացնում փաստագրում և արձանագրում:

Այս բաղադրիչի ուսումնասիրության շրջանակում, նույն հարցադրմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ 2022 թվականի ընթացքում Երևանի ենթակայության դպրոցներից մեկում արձանագրվել է բուլինգի մեկ դեպք, որի փաստագրումն իրականացվել է պաշտոնական գրագրությամբ: Նշվածի կապակցությամբ կարիք կա արձանագրելու, որ ՄԻՊ աշխատակազմում ինչպես դպրոցական բուլինգի, այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատություններում տեղի ունեցած բուլինգի դեպքերի վերաբերյալ բազմիցս ստացվել են բողոքներ: Օրինակ, ծնողի տեղեկացմամբ՝ «Մաթեմատիկա» առարկայի ուսուցիչը փայտով հարվածել է երեխայի մեջքին և պարբերաբար երեխային պիտակավորելով և վիրավորելով բուլինգի է ենթարկել: Ծնողներից մեկն հայտնել է, որ իր երեխային դասղեկը պարբերաբար նվաստացրել է և շեշտադրել է իր առավելությունը երեխայի նկատմամբ: Մեկ այլ օրինակով, երեխային դպրոցում բուլինգի են ենթարկել վերջինիս շրջապատից մեկուսացնելով, քանի որ երեխան ունեցել է որոշակի առողջական խնդիրներ: Խոսելով առողջական խնդիրներով պայմանավորված խտրական վերաբերմունքի դրսևորումների մասին՝ հարկ է նշել, որ այն լայն տարածում ունի նաև մանկապարտեզներում: Օրինակ, ծնողը տեղեկացրել է, որ իր երեխան հաճախում է Երևանում գործող մանկապարտեզ և ունի շաքարային դիաբետ, ուստի վերջինիս առողջության պահպանման համար խիստ անհրաժեշտ է, որպեսզի մանկապարտեզում իրականացվի երեխայի պահպանողական բուժումը: Ծնողի պնդմամբ՝ հիվանդության պատճառով, մանկապարտեզի անձնակազմը թույլ չի տվել երեխային հաճախել մանկապարտեզ և ցուցաբերել է վատ վերաբերմունք: Մանկապարտեզի աշխատակազմը ծնողին առաջարկել է դադարեցնել

երեխայի հաճախումը մանկապարտեզ, քանի որ մանկապարտեզի անձնակազմը չի կարող երեխայի համար անհրաժեշտ (գլյուկոզայի չափում, սննդի ածխաջրերի քանակի հաշվում, ինսուլինի ներարկում) խնամք իրականացնել: ՄԻՊ աշխատակազմի միջամտությամբ խնդիրը կարգավորվել է և իրավասու պետական մարմնի կողմից շրջաբերական է ուղարկել ՀՀ-ում գործող բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններին՝ Առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 7-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների առողջության առաջնային պահպանման բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգի հաստատման մասին» թիվ 2860-Լ հրամանի 12-րդ հավելվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված իրավական կարգավորումները գործնականում ապահովելու նպատակով:

Վերոնշյալի հարցադրումների կապակցությամբ ՏԿԵՆ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը վկայում է, որ մարզային ենթակայության ներքո գտնվող դպրոցներում հիմնականում բացակայում են բուլինգի դեպքերի փաստագրման և մշտադիտարկման հստակ և միասնական մեխանիզմներ:

Որոշ մարզային ենթակայության ներքո գտնվող դպրոցներում փաստագրում և մշտադիտարկում չիրականացնելը ՏԿԵՆ-ի կողմից հիմնավորվել է այդ դպրոցներում բուլինգի երևույթի բացակայությամբ և մարզերի աշխատակազմերի կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումներով: Մինչդեռ հարկ է փաստել, որ հենց փաստագրման և մշտադիտարկման հստակ գործիքակազմի ներդրումն ու գործարկումն է, որ ապահովում է բուլինգի երևույթների բացահայտումը: Այդ մասին է վկայում նաև ՏԿԵՆ-ի կողմից մատնանշված բուլինգի դեպքեր չարձանագրած մարզերի դպրոցներում այդպիսի դեպքերի մասին ՄԻՊ աշխատակազմում ստացված բազմաթիվ բողոքները:

ՏԿԵՆ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ որոշ մարզերում իրականացվել է բուլինգի դեպքերի արձանագրում: Այսպես օրինակ՝ Կոտայքի մարզում արձանագրվել է 7 դեպք և այդ դեպքերի դերակատար աշակերտները շարունակել են կրթությունն իրենց

ուսումնական հաստատություններում, իսկ այդ փաստագրումն իրականացվել է մարզպետի աշխատակազմ հասցեագրված գրությունների հիման վրա:

Շիրակի մարզային ենթակայության ներքո գտնվող հանրակրթական ուսումնական հաստատություններում արձանագրվել է բուլինգի 9 դեպք: Արարատի մարզային ենթակայության ներքո գտնվող դպրոցներում արձանագրվել է բուլինգի 11 դեպք և իրականացված աշխատանքների արդյունքում առաջացած խնդիրները հարթվել են: Ընդ որում, Արարատի մարզում բուլինգի դեպքերի արձանագրումն իրականացվել է բուլինգի դեպքերի վարման, կանխման, իրազեկման աշխատանքների կազմակերպման համար տրված համապատասխան հանձնարարականների հիման վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է ընդգծել, որ ոլորտի պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներդրված չէ բուլինգի դեպքերի մասին տվյալների հավաքագրման, փաստագրման և մշտադիտարկման միասնական մեխանիզմ: Հետևաբար, վերջիններիս կողմից բուլինգի դեպքերի վերաբերյալ արձանագրված տեղեկատվությունը չի արտացոլում այդ դեպքերի ամբողջական պատկերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***ներդնել բուլինգի դեպքերի փաստագրման և մշտադիտարկման հստակ և միասնական մեխանիզմներ,***
- ***վարել բուլինգի դեպքերի վիճակագրություն՝ ըստ դեպքերի պատճառների,***
- ***ուսումնական հաստատություններում ստեղծել բուլինգի դեպքերի մշտադիտարկող հանձնաժողով, որի անդամ կլինեն և՛ մանկավարժները, և աշակերտները:***

Հավել վաճներ

Հավելված 1

<u>ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ</u>

<u>Աշակերտների ինքնագնահատման սանդղակ</u>

Վերջին 7 օրվա ընթացքում.	**0 անգամ**	**1 անգամ**	**2 անգամ**	**3 անգամ**	**4 Անգամ**	**5 անգամ**	**6+ անգամ**
1. Ես ծաղրել եմ այլ աշակերտներին նրանց բարկացնելու նպատակով	0	1	2	3	4	5	6+
2. Ես հեշտությամբ բարկացել եմ ինչ-որ մեկի վրա	0	1	2	3	4	5	6+
3. Ես ետ եմ հարվածել, երբ ինչ-որ մեկը ինձ առաջինը հարվածել է	0	1	2	3	4	5	6+
4. Աշակերտներին զվարճացնելու համար այլ երեխաների մասին չարախոսել եմ	0	1	2	3	4	5	6+
5. Ես խրախուսել եմ	0	1	2	3	4	5	6+

այլ աշակերտներին, որպեսզի կռվեն							
6. Ես հրել/հրմշտել եմ այլ աշակերտներին	0	1	2	3	4	5	6+
7. Ես օրվա մեծ մասը բարկացած էի	0	1	2	3	4	5	6+
8. Ես ֆիզիկական կռվի մեջ եմ մտել բարկացած լինելու պատճառով	0	1	2	3	4	5	6+
9. Ես ապտակել կամ հարվածել եմ ինչ-որ մեկին	0	1	2	3	4	5	6+
10. Ես այլ աշակերտներին վատ անուններով եմ դիմել	0	1	2	3	4	5	6+
11. Ես սպառնացել եմ վնասել կամ հարվածել ինչ-որ մեկին	0	1	2	3	4	5	6+
12. Ես	0	1	2	3	4	5	6+

սոցիալական ցանցերի միջոցով ուղարկել եմ նամակներ/նկարներ, որոնք պարունակել են վիրավորանք և սպառնալիք	

Copyright © 2001 Sage Publications. Reproduced by special permission of the publisher; Sage Publications from: The Aggression Scale: A self-report measure of aggressive behavior for young adolescents. Journal of Early Adolescence, 21, 50–67 by Pamela Orpinas & Ralph Frankowski.

Հավելված 2

<u>Դիտարկման քարտ</u>

<u>Դիտարկման քարտը կիրառվում է դպրոց այցի ժամանակ:</u>

Այստեղ գրառվում են այցելության ընթացքում աչքի ընկած պատահարները, իրավիճակները՝ կապված դպրոցական միջավայրում բուլինգի հնարավոր դրսևորման հետ:
Հիմնականում նկարագրվող իրավիճակների առկայության դեպքում կարող ենք իրականացնել դասակարգումներ՝ ըստ երեք տեսակների:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ենթակա իրավիճակներ		
Դպրոցի միջավայրը և սոցիալ-հոգեբանական մթնոլորտը	**ԱՅՈ**	**ՈՉ**
Դպրոցի ընդհանուր միջավայրը հանգիստ է, ներառական	☐	☐
Աշակերտները դասերին ազատ են՝ պատասխանելու ուսուցիչների հարցերին և դիտարկումներին	☐	☐
Դասամիջոցներին աշակերտները դուրս են գալիս դասասենյակներից	☐	☐
Ուսուցիչները հետաքրքրված և մոտիվացված են կրթության կազմակերպման և իրականացման գործում, դասերի ընթացքում աղմուկ, բղավոցներ չկան	☐	☐
Աշակերտների վարքագիծ, միմյանց հետ հաղորդակցություն, շփում	**ԱՅՈ**	**ՈՉ**
Աշակերտները ազատ հաղորդակցվում են, կարող են նաև միմյանց հետ կատակել	☐	☐
Աշակերտները միմյանց ծաղրում են, դիտավորությամբ հրում և հրմշտում	☐	☐
Նկատելի է, որ աշակերտների որոշ խմբեր առանձնացված են և մարգինալացված	☐	☐
Աշակերտների միջև կա կոնֆլիկտ և լարվածություն	☐	☐
Աշակերտները միմյանց հարվածում են կիրառում են	☐	☐

բռնություն		
Կիրառվող կարգապահական միջոցները	**ԱՅՈ**	**ՈՉ**
Աշակերտները պատժվում են նկատողությամբ	☐	☐
Աշակերտների նկատմամբ կիրառվում են պատժի ֆիզիկական միջոցներ	☐	☐
Աշակերտները ժամանակավորապես հեռացվում են դասասենյակից	☐	☐
Աշակերտներին ուղղորդում են ոստիկանություն	☐	☐
Երեխաներին դուրս են թողնում դպրոցից	☐	☐
Ծնողների ներգրավվածությունը մասնակցությունը	**ԱՅՈ**	**ՈՉ**
Ծնողները մասնակից են կրթության կազմակերպմանը	☐	☐
Դասասենյակներում, միջանցքներում կան ծնողներ	☐	☐
Ծնողների հետ քննարկվում են երեխաների կարգապահության հարցերը	☐	☐
Կա ծնողական անկյուն կամ տեղեկատվական հարթակ ծնողների համար	☐	☐
Ուսուցիչների հաղորդակցությունը աշակերտների հետ	**ԱՅՈ**	**ՈՉ**
Ուսուցիչները աշակերտների հետ շփվում են միայն դասաժամի ընթացքում, դասին վերաբերող նյութի շուրջ	☐	☐
Ուսուցիչների հետ զրույցները նաև դասարանից դուրս են, միջանցքներում և ուսուցչանոցում	☐	☐
Աշակերտների հետ զրուցում են նաև այլ մասնագետներ, դպրոցին աջակցող անձնակազմը	☐	☐
Երեխաները երբեք չեն հաղորդակցվել դպրոցի հոգեբանի	☐	☐

կամ սոցիալական մանկավարժի հետ		
Հաղորդակցություն խոցելի երեխաների հետ	**ԱՅՈ**	**ՈՉ**
Դպրոցում որոշ երեխաներ ընդհանրապես առանձնացված և մեկուսացված են	☐	☐
Հաշմանդամություն ունեցող երեխաների հետ զրույցներ չեն նկատվում	☐	☐
Սպորտային, մշակութային միջոցառումների մեջ երեխաների որոշակի խմբեր ներառված չեն	☐	☐
Ավագ դասարանների աշակերտների կողմից մենթորություն	**ԱՅՈ**	**ՈՉ**
Ավագ դասարանի աշակերտները օգնում են ցածր դասարանի աշակերտներին	☐	☐
Ավագ դասարանի աշակերտների կողմից նկատելի է ճնշում կրտսեր դասարանների աշակերտների նկատմամբ	☐	☐
Ավագ դասարանների և կրտսեր դասարանների աշակերտները ունեն համատեղ միջոցառումներ	☐	☐
Անձնակազմի խորհրդակցություններ երեխաների վարքագծի, բուլինգի հետ կապված և արձագանքման գործողություններ	**ԱՅՈ**	**ՈՉ**
Անձնակազմը վարում է երեխաների վարքագծի հետ կապված մատյան, այդ թվում՝ երեխաների նկատմամբ բռնության դեպքերի գրանցամատյան	☐	☐
Կա մասնագիտական քննարկումների սենյակ և կազմակերպվում է աշակերտների ընդունելություն	☐	☐
Երեխաները, ըստ անհրաժեշտության, կարող են դիմել աջակցող մասնագետներին	☐	☐
Ուսուցիչները և աջակցող անձնակազմը կարող է դիմել դպրոցի տնօրինությանը երեխաների վարքագծի հետ կապված հարցեր քննարկելու համար	☐	☐

Հավելված 3

Ֆոկուս խումբ աշակերտների շրջանում

1. Բուլինգի մասին պատկերացումները աշակերտների շրջանում

- Ինչ է բուլինգը
- ինչպես է դրսևորվում դպրոցում, առցանց
- հիմնական տեսակները
- ձևերը

2. Որո՞նք են բուլինգի հիմնական պատճառները

- Ներառականության պակաս
- Խտրական մոտեցումներ
- Իշխանության կոորդինացում

3. Ովքե՞ր են առավել խոցելի դպրոցական միջավայրում

- Աղքատ ընտանիքների երեխաներ
- Հաշմանդամություն ունեցող երեխաներ
- Այլ երեխաներ

4. Ձեր դպրոցում բուլինգի հետ կապված հիմնական խնդիրները

- Որ երեխաներն են առավել հաճախ ճնշվում
- Ինչպես է դրսևորվում այդ ճնշումը և չարաշահումը
- Ինչքան հաճախ են լինում դպրոցական վիճաբանությունները՝ ֆիզիկական հարվածներ հասցնելով
- Տարիքային որ խմբերի մեջ է հատկապես դրսևորվում
- Ինչպես է դրսևորվում տղաների շրջանում և աղջիկների շրջանում

5. Բուլինգի միտումները, որոնք անհանգստացնում են աշակերտներին

- Առցանց բուլինգի վերջին դեպքը, որ կհիշեն
- Երեխաների նկատմամբ ճնշումները
- Իշխանության

6. Ինչպե՞ս կարելի է կանխել և արդյունավետ միջամտել

- Ինչպես եք տեսնում միջամտությունը բուլինգին

- Ովքեր են հիմնականում պատասխանատու
- Ինչ կարող են անել ուսուցիչները և դպրոցական անձնակազմը
- Ինչ կարող են անել այլ դերակատարներ

7. Երեխաների մասնակցությունը բուլինգի հաղթահարմանը

- Ինչպիսին է երեխաների դերը
- Ինչպես կարող են հասնել առավել ներառական և անվտանգ միջավայրի ստեղծմանը
- Ինչքանով կարող են նվազեցնել բուլինգի դեպքերը և դրսևորումները

Հավելված 4

Հարցաթերթիկով հարցում ուսուցիչների համար

1. Երեխաների շրջանում բուլինգը դրսևորվում է /նշել բոլոր հնարավոր պատասխանները/:

ա/ֆիզիկական հարվածների ձևով
բ/սպառնալիքների ձևով
գ/վատ բառերի, հայհոյանքների ձևով
դ/հոգեբանական ճնշման ձևով
ե/առցանց սպառնալիքների միջոցով
զ/սեռական բռնության միջոցով
է/այլ/նշել/

2. Բուլինգի հիմնական դրսևորումները, որին ականատես եք լինում Ձեր միջավայրում

---

3. Բուլինգի հաճախականությունը երեխաների նկատմամբ այլոց կողմից բուլինգը դրսևորվում է

1. Ամեն օր
2. Ամեն շաբաթ
3. Ծաբաթը երկու անգամ
4. Ամեն ամիս
5. Տարվա մեջ մի քանի անգամ
6. Երբեք

4. Ուսուցիչների դիրքորոշումները և դերակատարությունը բուլինգի դեպքում

1. Անմիջապես միջամտում եմ և պահանջում եմ իրավիճակի դադարում
2. Կանչում եմ բռնություն գործադրած երեխային և զրուցում եմ
3. Զրուցում եմ բռնության ենթարկված երեխայի հետ, հասկանալ իրավիճակը իր տեսանկյունից

4. Զեկուցում եմ դպրոցի տնօրինությանը

5. Փորձում եմ պարզել իրավիճակը այլ աղբյուրներից

6. Չեմ միջամտում, կարծում եմ՝ դա ուսուցչի պարտականությունների մեջ չէ

7. Հրավիրում եմ այլ մասնագետների՝ սոցիալական մանկավարժների, հոգեբանների, լուծելու իրավիճակը

5. Որոնք են այն իրավիճակները, որոնց դեպքում անհապաղ համագործակցում եք այլ մասնագետների հետ

1. Ուստիկանների հետ

2. Սոցիալական մանկավարժների հետ

3. Հոգեբանների հետ----------

6. Ձեր դպրոցում որ իրավիճակներն են, որ առավել դժվար կառավարելի են:

---

7. Որքան հաճախ են այդ իրավիճակները կրկնվում:

---

8. Եթե գնահատեք Ձեր դպրոցի ընդհանուր անձնակազմի արձագանքը ընդհանուր դպրոցական բուլինգի դեմ պայքարին, 0-10 միջակայքում, որն է Ձեր պատասխան գնահատականը

-

9. Խնդրում ենք հիմնավորել

---

10. Ինչ է անհրաժեշտ բուլինգն առավել նվազեցնելու և կառավարելի դարձնելու համար:

Հավելված 5


Աշակերտների ինքնագնահատման սանդղակի քանակական վերլուծություն
900
800
700
600
500
400
300
200
100
0
340
662
590
215
148
428
623
315
422
436
270
164
Ես ծաղրել եմ այլ աշակերտներին նրանց բարկացնելու նպատակով
Ես հեշտությամբ բարկացել եմ ինչ-որ մեկի վրա
Ես ետ եմ հարվածել, երբ ինչ-որ մեկը ինձ առաջինը հարվածել է
Աշակերտներին զվարճացնելու համար այլ երեխաների մասին չարախոսել եմ
Ես խրախուսել եմ այլ աշակերտներին, որպեսզի կռվեն
Ես հրել/ հրմշտել եմ այլ աշակերտներին
Ես օրվա մեծ մասը բարկացած էի
Ես ֆիզիկական կռվի մեջ եմ մտել բարկացած լինելու պատճառով
Ես ապտակել կամ հարվածել եմ ինչ-որ մեկին
Ես այլ աշակերտներին վատ անուններով եմ դիմել
Ես սպառնացել եմ վնասել կամ հարվածել ինչ-որ մեկին
Ես սոցիալական ցանցերի միջոցով սպառնացել և/կամ ծաղրել եմ ինչ-որ մեկին